Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2092

Ս. ԿԻՐՈՎ.



ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ
ԴՐՈՇԻ ՏԱԿ

ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՆՈՐԱՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

ՊՏ 1931 ԵԵՐԵՎԱՆ

Ս. ԿԻՐՈՎ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ԴՐՈՇԻ ՏԱԿ

ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՆՈՐԱՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Ա 9512
ՀԱՅԿ ԱՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1930

Հրատ. № 1482
Գրատեպ. № 6096 (բ). Պատվեր № 1429 Տիրաժ 3000
Պետհրատի էլեկտրոդ տպարան Ցերևանում

ՄԵՆՔ ԹԵՎԱԿՈՒՍԼ ԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՃԻՇՏՆԵՐԸ *)

Ընկերներ, այսորվա մեր թեմայի հետ կապված անհրաժեշտ է, որ ես նախապես համառոտ կերպով բնութագրեմ այն դրությունը, որի մեջ այժմ գտնվում է մեր Խորհրդային Միությունը, որովհետև միանգամայն պարզ է, որ վերջերս մեր կուսակցության ներսում տեղի ունեցած դեպքերը չեն կարող քննության առնվել անջատ կերպով։ Սակայն զբաղվել տվյալ շրջանում մեր սոցիալիստական կառուցման ընդհանուր դրության մանրամասն բնութագրությամբ՝ ես մեր այսորվա ժողովում չեմ կարող, որովհետև դրա համար այդքան ժամանակ և հնարավորություն չունեմ, ուստի թույլ տվեք իմ զեկուցման այդ մասում սահմանափակվել միմիայն ընդհանուր տվյալներով։

ՀՆԳԱՄՅԱԿԻ ԵՌԱՄՅԱ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՍՐԲՆԹԱՑ ՔԱՅԼ Ե ԳԵՊԻ ԵՌԱՄՅԱ

Մեր հնգամյա պլանի յերբորդ տարին չափազանց կարևոր դեր է խաղում այդ պլանի ամբողջությամբ իրագործման ասպարեզում։ Եթե մեր աշխատանքների առաջին տարին, ըստ հնգամյակի, իրեն

*) Վերամշակված զեկուցումներ Անդրյիրկոմի ու Համկ (բ) Կ Ա. Ցկ ԿՎՀ-ի միացյալ պլենումի և 1930 թ. նոյեմբերի 19-20-ը կայացած Թիֆլիսի ակտիվի, Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ ժողովում։

խոշոր մասով կրում էր նախապատրաստական բնույթ, յեթե հինգ տարի ժամանակամիջոցի համար խորը մտածված ծրագրով կատարվելիք աշխատանքների առաջին տարին մենք գործադրել ենք նրա համար, որպեսզի նպատակահարմար կերպով դասավորենք ըստ այդ պլանի մեր յալ և կենդանի ուժերը և ինքն ըստինքյան հասկանալի յե, որ այդ տարվա խոշոր մասը զբաղված է յեղել գործի կազմակերպչական կողմով, հապա հնգամյակի յերկրորդ տարին մենք մտել ենք բավականաչափ կազմակերպված։

Ի՞նչպես ենք իրագործել հնգամյակի յերկրորդ տարվա ծրագիրը։

Ցես ձեր հիշողության մեջ կթարմացնեմ մի շարք ընդհանուր տվյալներ, որոնք բնութագրում են մեր աշխատանքները հնգամյակի յերկրորդ, ավարտված տարում։ Դուք բոլորդ յերևի հիշում եք, որ մեր Միության Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի կողմից պլանավորվող ամբողջ (валовая) արտադրանքը, անցած տարվա ընթացքում աճել է ընդհանուր առմամբ 25%։ Դուք նույնպես գիտեք, որ այն արդյունաբերությունը, որը վճռական նշանակություն ունի մեր սոցիալիստական կառուցման գործում, դա՝ գործիքներ և արտադրական միջոցներ արտադրող արդյունաբերությունն է։ Տնտեսության այդ ճյուղը անցյալ տարվա ընթացքում մեզ տվել է աճում 40%։ Մեր ամբողջ տնտեսության համայնացրած սեկտորում հիմնական ներդրումները մենք ավելացրել ենք 84%, իսկ մեր արդյունաբերության մեջ—89%։

Ցես գիտեմ, որ դուք բոլորդ էլ ընտելացել եք այդ տոկոսներին, հետևապես յես դրանով չեմ ուզում

զարմացնել ձեզ այնպիսի աճմամբ, ինչպես 40% և այլն։ Ինձ քաջ հայտնի է բալշևիկյան ստամոքսների շատակերությունը, չեմ գիտեմ, վոր նրանց ոչինչ անդամ այդ տոկոսներով չեմ կշտացնի։ Ցեմ նույնպես գիտեմ, ինչպես և դուք բոլորդ, նաև այն, վոր և վոչ մի կապիտալիստական յերկիր իր գոյության ամբողջ ընթացքում այդպիսի տեմպեր չի տեսել։ Հայտնի է, վոր այնպիսի մի յերկիր, ինչպիսին և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, վորը իր ծավալի հզորության տեսակետից առաջին տեղն և բռնում կապիտալիստական զարգացման մեջ,—իր ամենահաջող տարիներում ունեցել է արտադրանքի աճում միմիայն 7-8%։ բայց և այնպես այդ աննշան %-ը՝ մեր տեմպերի և թափի հետ համեմատած՝ այնտեղ խոշորագույն նվաճում և համարվում։ Բայց, չեմ կարծում եմ, մենք չպետք և հավասարվենք կապիտալիստական յերկրներին։ Մենք ձեզ հետ միասին լոզունգ ենք նետել վոչ թե միայն հասնել, այլ և անցնել կապիտալիստական յերկրներին, իսկ վորպեսզի վոչ թե միայն հասնենք, այլ և անցնենք, դրա համար, բնականաբար, անհրաժեշտ է կրկնակի քայլերով չշարժվել։

Վորպեսզի պատկերացնենք մեզ այն նվաճումները, վոր վերջին ժամանակներս մենք ունենք, մանավանդ վերջին յերկու տարիների ընթացքում, իմ կարծիքով, բոլորովին ավելորդ չի լինի մի հետադարձ հայացք գցենք մի քիչ դեպի հետ։ Ցեմ այդ ցանկանում եմ անել նրա համար, վորովհետև այդպիսի դեպքերում մենք հայտնի ենք մեր շատ վատ հիշողությամբ, մենք սովորաբար մոռանում ենք այն, վորը մեզանում պատմական եր թեկուզ յերեկ, այն քայլերը, վորոնք մենք

անում ենք այժմ, դեռևս թվում են, իբր թե անբավարար։

Ցեկեք հապա նայենք, թե ինչ կար մեզ մոտ մոտավորապես 8-10 տարի առաջ։ Պետությանն զարգացման, ժողովրդի զարգացման տեսակետից 8-10 տարին—չէ վոր դա վերջապես մի պատմական ակնթարթ է, դա այնքան կարճ ժամանակամիջոց է, վոր մոռանալ այն, ինչ յեղել է այդ ժամանակ՝ յերբեք չի կարելի։

Դեռ մոտիկ անցյալում ենք, յերբ մենք համեմատում եյինք մեր տնտեսական զարգացման մակարդակը այն դրության հետ, վորում նա գտնվում ենք ցարի, կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության ժամանակ, այսպես կոչված «նախապատերազմյան դրության» հետ։ Մենք, սովորաբար, համեմատում ենք մեր զարգացման աստիճանը 1913 թվի հետ, և արդեն բոլորին հայտնի յե, վոր շատ ճյուղերում այդ մակարդակն այնքան հեռու յենք թողել ու անցել, վոր վոչ մի միտք չկա այժմ համեմատության դնել այդ գծով։ Բայց յեթե մինչև իսկ համեմատենք այն, ինչ վոր կար 8-10 տարի առաջ ցարի ժամանակ յեղած դրության հետ, ապա մենք կտեսնենք հսկայական տարբերություն։

Բոլորին հայտնի յե, վոր ժողովրդական տնտեսության զարգացման ասպարեզում վճռական դեր և խաղում չուգունը։ Այն ժամանակ (արդեն մեր ժամանակ, այսինքն, 8-10 տարի առաջ) մենք արտադրում եյինք չուգուն վոչ ավել վոչ պակաս 2, 4% 1913 թվի համեմատությամբ, ընդհանրապես հանք մենք հանում եյինք 1,7%, իսկ այնպիսի մետալ, ինչպիսին և պղ-

գինձ՝ մենք բոլորովին չելինք արտադրում։ Մեր ժողովրդական տնտեսությունն այն ժամանակ այնպես եր կազմակերպված, որ շատերին թվում եր, թե անհրաժեշտ կլինի գործադրել հսկայական ժամանակ,— համենայն դեպս անհրաժեշտ և վոչ թե մեկ տարի, այլ տասնյակ տարիներ,—վորպեսզի ինչպես հարկն է իսկապես տաբքավորել, կոկել կարգի բերել մեր ժողովրդական տնտեսությունը։ Հիշում եմ, դրա հետ կապված, ԺՏԳԽ-ի նախագահ ընկ. Բադդանովի հայտարարությունը, վորը իր զեկուցումներից մեկում մեծ վոգեվորությամբ խոսում եր այն խոշոր նվաճումների մասին, վորոնք մենք ունենք գործարանների և ֆաբրիկաների ներսում աշխատանքի կազմակերպման ասպարեզում։ Նա որինակի համար բերում եր հետևյալ թվերը, վոր հարկելի և վոչ հարգելի պատճառներով գործադանցների բացակայությունների թիվը գործարաններում և ֆաբրիկաներում տարեց տարի և ամեն ամիս պակասում է, և վոր այժմ անցյալի հետ համեմատած 45% փոխարեն ունենք միմիայն 40%։

Այդ գոյություն ուներ ընդամենը 8-9 տարի առաջ, և ահա, յես այժմ հարցնում եմ. իսկ ինչ կլիներ, յեթե մեզանում, այսոր մի վորևե բան նման լիներ նրան, վորի մասին այնքան վոգևորված, ինչպես մի խոշոր նվաճման մասին, խոսում եր այն ժամանակ ընկ. Բադդանովը։ Ինձ թվում է, վոր այդպիսի գործի համար մեր հարցը անհրաժեշտ կլիներ դնել վոչ թե միայն Վերահսկիչ հանձնաժողովում, այլ ուղղակի մեզ քշել Սալովիանները։ 40% բացակայություն դա մեզ համար այժմ կատարյալ կործանում կլիներ։ Բայց չէ՞ վոր դա բոլորովին մոտ ժամանակներս եր։

Որպես մեր տնտեսական աշխատանքի խոշոր նվաճումներից մեկի, այս կարճ ժամանակամիջոցում, չի կարելի չմատնանշել այն հիվանդագին սոցիալական յերևույթի լիկվիդացիայի վրա, որը ուղեկցում եր մեր ամբողջ աշխատանքներին հեղափոխության ընթացքում, ուղեկցում եր մեր ամբողջ սոցիալիստական շինարարությանը։ Ցեսս խոսում եմ գործազրկության վերացման մասին։ Դուք գիտեք, որ ներկայումս արդյունաբերական քաղաքներում այլևս վոչ մի գործազուրկ չկա, սակայն վոչ հեռու ժամանակներս միայն Լենինգրադում կային մոտավորապես 100 հազար գործազուրկ։ Այժմ Լենինգրադում գործազրկությունն իսպառ վերացված է, և մենք դրան ել նույնպես կարծես թե ընտելացել ենք,—բայց ահա թույլ տվեք հիշեցնեմ ձեզ այսպիսի մի փաստ. յերբ մենք մանրամասնությամբ մշակում ելինք մեր հնգամյա պլանը, շատ խնդիրներ արդեն այն ժամանակ հնարավոր եր լինում ճիշտ լուծել մեր ոգտին, սակայն գործազրկության խնդիրը թվում եր անհաղթահարելի։ Վերհիշում եմ նույնպես Պետպլանում կայացած նիստերից մեկը, վորտեղ մասնակցում ելին բոլոր նահանգների և հանրապետությունների ներկայացուցիչները։ Ցերբ այդ նիստում վերջնականապես մշակվում ելին մեր հնգամյակի թվերը, ամենից «ծեղ տեղը», ինչպես ընդունված է այժմ մեզ մոտ ասել, նորից հանդիսացավ գործազրկության խնդիրը։ Այն ժամանակ մեր Պետպլանի քուրմերից մի քանիսն ապացուցում ելին մեզ, վոր արդյունաբերության, գյուղատնտեսության և մյուս բոլորի աճման տեմպերը մենք դեռ կարող ենք իրականացնել, բայց ահա գործազրկության վերացու-

մը — այդ գործը գլուխ չի գա, վորովհետև ըստ «ինֆատունն» վիճակագրության հաշիվների՝ դուրս եր գալիս, վոր մեր ամբողջ Միության բնակչության արտադրողական ուժերը, վորոնք ուղղված են ազգաբնակչության անեցման կողմը՝ գործում են ավելի մեծ եներգիայով, քան այն արտադրողական ուժերը, վորոնք ուղղված են դեպի ժողովրդական տնտեսության զարգացման կողմը։ Վիճակագիրները հաստատում ելին, վոր մեր Միության ազգաբնակչությունը տարեց-տարի ավելանում է մոտավորապես 3 ու կես միլիոն մարդով, վոր այդպիսի աճումը կշատացնի բնակչության ավելցուկը (կատեղծի գերբնակչություն), և վոր դրա հետևանքով վերացնել գործազրկությունը առաջիկա մոտ տարիներում՝ հնարավոր չե։

Բայց ինչպես յեղավ իրականում։ Բավական եր, վոր ըստ հնգամյա պլանի աշխատելինք միմիայն յերկու տարի, և մենք կարծես թե այդ յերևույթը — գործազրկությունը — վերացրինք, կամ, ավելի ճիշտ կլինի ասել, համարյա վերացրինք։

Բանվորական ուժի այն ռեզերվները, վորոնք մոտ ժամանակներս ունեյինք աշխատանքի բորսաներում, համենայն դեպս, վորակյալ աշխատանքի՝ մեր միջավայրում արդեն չկան։ Ցեվ այժմ մենք ավելի շատ զբաղված ենք վոչ թե այն հարցով, թե ինչպես վերջնականապես վերացնենք գործազրկության անհնշան մնացորդները, այլ մտահոգված ենք մեր գործարաններին և ֆաբրիկաներին անհրաժեշտ բանվորական ուժի լրացման համար աղբյուրներ փնդռելու խնդրով։

Նույպես խոշոր հաջողությունների յենք հասել այդ ժամանակամիջոցում և գյուղատնտեսության պա-

պարիզում։ Ցեռ թվեր չեմ բերի, այլ կմատնանշեմ միայն մեկ հանգամանք. դա այն է, որ այսոր մենք ունենք բոլոր հիմունքները վստահությամբ հաստատելու, որ ցավոտ խնդիրներից մեկը, հացի խնդիրը, մեր կողմից, որպես մեր անցած տարվա աշխատանքների արդյունք, լուծված է ամբողջությամբ ու լրիվ։ Հացահատիկային պրոբլեմը մենք համարում ենք լուծված իր բոլոր կողմերով։ Ցեվ այստեղ մեզ համար ևս ավելորդ չի լինի նորից հետ նայել մեր անցյալի վրա։

Վաղուց է, ընկերներ, ինչ հացի խնդիրը ծանրացել եր մեր ամբողջ աշխատանքների վրա։ Հեռու եր թվում մեզ այն ժամանակը, երբ այլևս կարիք չեր լինի զբաղվել այդ ցավոտ հարցով։ Սակայն այսոր մենք այնպիսի դրության մեջ ենք, երբ վոչ թե միայն ապահովել ենք բնակչության հացի կարիքը, այլև ունենք միանգամայն վորոշ հնարավորություն այս տարի ստեղծելու հիմնական մթերումներ գալ տարվա համար։

Անցած տարվա ընթացքում մենք ընդհուպ մոտեցել ենք մեր գյուղատնտեսության վերակառուցմանը նոր հիմունքների վրա։ Ցեվ բոլորից նշանավորն այն է, որ ժողովրդական տնտեսության կազմակերպման սոցիալիստական ձևերը մենք փոխադրել ենք և այդ բնագավառը։

Ցերբ մեր Միության հսկայական դաշտերում յերևացին առաջին պետական հացահատիկային ֆաբրիկանները, այն ժամանակ շատերի մեջ կասկած առաջացավ, իսկ ինչ դուրս կգա դրանից։ Դուրս յեկավ այն, ընկերներ, որ մեր պետական հացահատիկային ֆաբրիկանները, ընդհանուր առմամբ, ընդգրկում են

մոտավորապես 4 միլլիոն հեկտար հողամաս։ Դալ տարի մենք յենթադրում ենք այդ քանակը կրկնապատկել։ Իսկ հաջորդ—32 թվին հողերի քանակը, որը պետք է դրաղեցնեն մեր խորհրդային տնտեսությունները, պետք է հասնի վոչ ավել, վոչ պակաս՝ 15 միլլիոն հեկտարի։ Այդ մոտավորապես այն տարածությունն է, որը կապահովի մեր հացամթերումն անցած տարվա չափով։

Մեծ նշանակություն ունի նաև այն բեկումը, որը կատարվել է մեր գյուղում տարվելիք քաղաքականության մեջ, որով մենք վորոշել ենք անհատական, միմիանցից անջատ գյուղացիական տնտեսությունները սոցիալիստական ձևով կազմակերպելու ուղին։ Մոսքս վերաբերում է կոլխոզային շինարարությանը։ Առաջին շրջանում այդ նոր բնագավառում աշխատանքները դժվար եյին ընթանում։ Մենք կատարել ենք մեծ և փոքր, իսկ շատ տեղերում, պետք է ուղղակի ասել, վոր մինչև իսկ շատ խոշոր սխալներ։ Բայց և այնպես մենք այդ գործից դուրս յեկանք բավականին խոշոր դրական հաշվեկշռով։ Այժմ, ըստ ամենահամեստ հաշվառման, հացահատիկային վճռողական շրջաններում կոլխոզներում ընդգրկված տնտեսությունների թիվը հասնում է համենայն դեպս վոչ պակաս 40 տոկոսից։ Գարնանացանի կամպանիայի ընթացքում կոլխոզների ցանքսերը հասնում եյին ընդհանուր մեր գյուղատնտեսության ցանքսի յերկու յերրորդի չափին։ Արդեն, հենց այս մեկ ընդհանուր տվյալները դալիս են ասելու, վոր մենք մեր աշխատանքները ծավալել ենք վոչ թե միայն քանակային տեսակետից, այլ վոր մենք ավելի հաստատ քայլերով, ուղղակի և վորոշակի անցնում ենք վոչ թե միայն քաղաքի (վորին

մենք անցել ենք վաղուց), այլ և գյուղատնտեսության վերակառուցմանը՝ նոր-սոցիալիստական հիմունքների վրա։ Մենք ձեռք ենք բերել այն, որ հիմնական գյուղատնտեսական շրջաններում վճռական դիրքերը, այդ ասպարեզում, մեր կողմից գրավված են։ Ցեվ այդ մեզ հնարավորություն տվեց մեր ամբողջ քաղաքականությունը, մանավանդ գյուղում, տանել ավելի վճռողականորեն, անցնել հարձակման մեր յերկրի կապիտալիստական դասակարգի մնացորդների վրա—հարձակումը կուլակության դեմ։

Մեկ անգամից և հեշտ կերպով չէ, ընկերներ, որ մենք մոտեցանք այդ պրոբլեմի լուծմանը։ Բայց մենք մազի չափ անգամ չեյինք կասկածում և չենք կասկածում որ այն գծով, որով մեզ տանում է ԿԿ, մենք կհասնենք սոցիալիստական հաղթանակի նույնպես և գյուղում։ Հետևապես մեր կուսակցության XVI համագումարի հիմնավորումը, որը ասում է, որ մենք այժմ թևակոխել ենք մեր յերկրում սոցիալիզմի անմիջական իրականացման շրջանը,—այդ հիմնավորումը հանդիսանում է ռեալ, կոնկրետ և գործնական մեր ամենորյա բոլոր աշխատանքներում։ Այն, որին թվում էր պետք է ձեռնարկեյինք յերկար ժամանակից հետո և, մանավանդ գյուղում.—այժմ իրականանում է կյանքում։

Մեր հաջողությունների շարքում չի կարելի չմատնանշել նաև այն, որ ո՛չ թե միայն քաղաքում, այլ և գյուղում աստիճանաբար անցնում ենք աշխատանքի կազմակերպմանը նոր հիմունքների, սոցիալիստական հիմունքների վրա։ Ցեթե մենք քաղաքներում, գործարաններում ու ֆաբրիկաներում գործադրում ենք աշխատանքային այնպիսի ձևեր, ինչպիսին

են սոցիալիստական մրցակցությունը, հակընթաց արդ-
ֆինպլանները, հարվածայնությունը և այլն, ճիշտ
նույն ձևերը, ճիշտ է վոչ այն մասշտաբով, ինչ վոր
գործարաններում ու ֆաբրիկաներում, մենք գործա-
դրում ենք նաև գյուղում, նույն միջակների մեջ, վո-
րոնք դեռ յերեկ խեթ աչքով նային մեր կոլխո-
զային շինարարության վրա։ Այդ նույն միջակը, վորը
դեռ կիսով չափ իրենից ներկայացնում է գյուղատնտե-
սության կազմակերպման կապիտալիստական ձևերի
ժառանգությունը, այդ միջակն այսոր արդեն ստի-
ճանաբար փոխադրվում է սոցիալիստական աշխատան-
քի ռելսերի վրա, նա արդեն թեքվել է դեպի սո-
ցիալիզմի ուղին։

Մեր նվաճումները հեռեվանց են բայլշեվիկյան դի-
մադրության՝ կուսակցության գլխավոր գծի համար մղ-
վող պայքարի ասպարիզում։

Այդ բոլորը միասին վերցրած, պարտավորեցնում
է մեզ, ընկերներ, վորոշելու, թե շնորհիվ ինչի՞ է, վոր
մենք կարողացել ենք հասնել այդպիսի խոշորագույն
նվաճումների մեր յերկրում սոցիալիզմի կառուցման
ասպարիզում։

Այդ հարցի պատասխանը միայն մեկն է. բոլորը
հիմնականում և առաջին հերթին—ամբողջովին բղխում
է այն գլխավոր քաղաքական գծից, վորը անշեղորեն
տանում էր գյուղում մեր կոմկուսակցությունը, տա-
նում էր մեր խորհուրդները։ Դրանով, միմիայն
դրանով է բացատրվում մեր բոլոր հաջողությունները,
յուր բոլոր նվաճումները։ Ցեվ միաժամանակ պետք է
ասել, վոր բոլոր անհաջողությունները, դժվարություն-
ները, չափազանցությունները, թերագնահատություն.

ու շեղումները և այն առաջացել են միայն այն պատճառով և այն վայրերում, որտեղ թերի և սխալ կերպով ե տարվել մեր կուսակցության գլխավոր գիծը։

Թերևս լրիվ կերպով ապացուցված չեր լինի, յեթե այդ մեր նվաճումները միայն մենք գնահատելու լինեյինք, թերևս մեզ կնախատելին պարծենկոտության մեջ՝ իբր «պառավը իր թանին թթու չի ասի»։ Սակայն մյուս կողմից չափազանց ծիծաղելի կլիներ, յեթե ամեն մի կառուցող, մանավանդ սոցիալիստական շինարարության կառուցող, վատաբաներ այն կառուցումը, շինարարությունը որը ինքն և ղեկավարում,— մանավանդ, յերբ մեր հաջողություններին վերաբերյալ ունենք որոշ ապացույցներ, որոնք յենթակա չեն ամենաչնչին կասկածի։ Յեթե միայն մի քանի տարի սրանից առաջ մեր թշնամիների կողմից մեր յերկրի տընտեսությունը գնահատվում եր միայն մեկ կերպ, յեթե մենք նրանցից այնպիսի բաներ եյինք լսում, որից յուրաքանչյուր թուլամորթ մարդ հեշտությամբ խուճապի կյենթարկվեր, սակայն այժմ դրությունը բոլորովին այլ է։ Այժմ ամենից պնդաճակատները, դեպի մեզ ամենից թշնամաբար տրամադրված բուրժուական տընտեսագետները ստիպված են միանգամայն բացահայտ կերպով խոստովանվել,—թեկուզ որքան ել դառն լիներ այդ նրանց համար,—մեր սրընթաց, իսկ հաճախ և կատաղի ընթացքը դեպի առաջ, քանի որ այժմ գործում են ոչ միայն մեր ագիտացիան և պրոպագանդան, այսինքն ոչ այն, որը մեր սկզբնական աշխատանքների ընթացքում միակն եր մեր տրամադրության տակ և յերբ մի որևե այլ բանով դժվար եր մեզ պարծենալ։ Նրանք, այդ արմատացած բուրժուական

տնտեսագետները չեն կարող այժմ չտեսնել այն ռեալ, բացահայտ հետևանքները, որոնք ավելի բարձր և ընդարձակ կերպով ծավալվում են մեր խորհրդային երկրում։

Ցեթե Լենինը հոկտեմբերից հետո ասում եր, որ կապիտալիստական և իմպերիալիստական աշխարհին մենք սարսափ կազդենք ոչ այնքան մեր ագիտացիայով և պրոպագանդայով, որքան մեր խորհրդային դոյության իրական փաստով, ապա այդ դրությունը հատուկ նշանակություն և ձեռք բերում այժմ, երբ մեր բայշևիկյան արտենալին դումարվում է ժողովրդական տնտեսության շինարարության այնպիսի հաջողություններ, որոնց հավասարը, բառիս բուն նշանակությամբ չեն յերաղել կապիտալիստական սիստեմի ամենահանդուգն քուրմերը։ Այդ հավասարապես վերաբերվում է թե մեր արդյունաբերությանը և թե մեր գյուղատնտեսությանը։

Ինձ թվում է, որ մենք դեռևս հաճախ թերագնահատում ենք մեր նշանակությունը ոչ թե միայն մեր յերկրի ներսում, այլև նրա սահմաններից դուրս. մենք թերագնահատում ենք մեր խորհրդային պետության նշանակությունը։ Ի հարկե մեծ սխալ կլիներ, յեթե մենք չափազանց գերագնահատեյինք մեր հզորությունը, մեր նշանակությունը և մեր ուժը,—այդ վայել չե բայշևիկին, այդ մեր սովորություններում չկա,—սակայն մյուս կողմից կարիք չկա կույսի ամոթխածությամբ ծածկել այն, ինչ որ մենք ունենք, ինչ որ մենք արդեն ձեռք ենք բերել։ Կրկնում եմ, իմ տրամադրության տակ այնքան ժամանակ չունեմ, որպեսզի բերեմ մեր աճումը ապացուցող թվերը,

ժանավանդ առանձին կարիք չկա, քանի վոր այդ թվերը ձեզ բոլորիդ հայտնի լեն։

Բնորոշ է, վոր կապիտալիստական յերկրների պահանջը մեր ամեն տեսակի հումքի մեջ տարեց տարի աճում է։ Բավական է թեկուզ բերել այսպիսի մի որինակ, վորպեսզի տեսնենք, թե արդեն ինչպիսի նշանակություն ենք ձեռք բերում համաշխարհային տնտեսության մեջ։ Ցեթե՝ որինակի համար, վերցնենք արտահանած փայտեղենի քանակը, ապա կտեսնենք վոր վոչ այնքան վաղուց, մեր համագումարներում մենք այս տարվա ընթացքում, յեթե մեր պլանը կատարենք 100 տոկոսով,—իսկ դրան պետք է հասնենք ինչ գնով ել լինի, – փայտեղենի արտահանման գործում մենք առաջին տեղը կբռնենք։ Մեզանից ավել վոչ վոք փայտեղեն արտահանել չի կարող։ Դեռ ավելին, յեթե դուք հիշում եք, խոսում ելինք, թե ինչ դրության մեջ է գտնվում մեր մետաղագործությունը։ Ցեթե հիշողությունս ինձ չի դավաճանում, մենք մետաղագործության մեջ գրավում ելինք հինգերորդ տեղը։ Իսկ այժմ մենք ավելի ու ավելի առաջ ենք շարժվում, և ինձ թվում է վոր արդեն առաջիկա ամիսներում կվորոշվի այն հարցը, թե մետաղագործության մեջ ով կլինի առաջինը՝ մենք թե Անգլիան։ Ցես արդեն չեմ խոսում մեր ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի զարգացման մասին, վորը ցայտուն կերպով վկայում է, վոր մենք արագ քայլերով շարժվում ենք առաջ ու արդեն սկսել ենք և արդյունաբերության այդ ճյուղերի զարգացման հաշվին կամաց-կամաց, հետզհետե վերականգնել մեր արտահանությունը։ Բայց չէ՞ վոր, ընկերներ, բացի այդ բոլորից, յուրաքանչյուր մեր գնբանից, մեր նավթի

A T 9512

յուրաքանչյուր վիթից, ընդհանրապես ասած, փչում է վոչ թե փայտի, կամ նավթի հոտ, այլ բուրում է բալշևիզմով, պրոլետարական դիկտատուրայի աձրությամբ և կարծրությամբ։ Ցեվ այդ հանգամանքը ավելի ու ավելի յն քայքայում կապիտալիստական աշխարհի ծրագրերը, միտումներն ու հանգատությունը։

ՄԵՋ ՀՈՏ-ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵՄՈՒՄ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ, ՆՐԱՆՑ ՄՈՏՏԻՐՈՒՄ Ե ԽՈՐԸ ՃԳՆԱԺԱՄ

Պետք է ասել ձեզ, վոր այդ բոլորը զուգադիպում է այն հանգամանքի հետ, վորի մասին մենք քաջ տեղյակ ենք, յես նկատի ունեմ այն հսկայական ճգնաժամը, վորը ապրում է կապիտալիստական աշխարհը։ Կապիտալիզմը, վորին ընկ. Բուխարինը նվիրել եր իր յերգասացությունները, վորը յերկար ժամանակ աշխատել է կազմակերպված կապիտալիզմի մասին թեմայի վրա, գերկապիտալիզմի մասին, այդ իսկ գերկապիտալիզմը և կապիտալիստական աշխարհը, վորին նույնպես փառաբանել է պատրիարք կեղծ-սոցիալիստ Կարլ Կաուցկին, այժմ գտնվում է ամենախոշոր ճգնաժամում, վորը հետզհետե ավելի սուր բնույթ է ստանում։ Սկզբում սկսվեց ֆինանսական ճգնաժամից, ապա հետզհետե սկսեց աճել արդյունաբերական ճգնաժամը, իսկ այժմ այդ բոլորը յայնանալով և ծավալվելով՝ վեր է ածվել ընդհանուր և ամենախոշոր տնտեսական ճգնաժամի։

Ճգնաժամը առաջանալով Հյուսիսային Ամերիկյան Միացյալ Նահանգներից, սկսեց հարվածել յեվրոպական յերկրները և այժմ չկա և վոչ մի կապիտալիստական պետություն, վորը չնստեր իր ոնանկացած կապի-

ՀԱՅԿ ԱՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
1920-ական թվեր

տալիստական ափերին և այդ ափերում չլերգեր բաբելոնյան տաղեր։

Այլ կերպ էլ լինել չեր կարող, վորովհետև այն թելը, վորով կապված են կապիտալիստական յերկրները՝ այնպիսին է, վոր յեթե կապիտալիստական յերկրներից մեկում հավասարակշռությունը խախտվի, մանավանդ այնպիսի նշանավոր յերկրում, ինչպիսին է Միացյալ Նահանգները, անխուսափելիորեն խոշոր թափով կործանիչ կերպով ե անդրադառնում մյուս յերկրների վրա։ Մենք տեսնում ենք մի շարք կործանումներ, վորոնք տեղի յեն ունենում բուրժուական-կապիտալիստական ամենամոտ, ամենակայուն թվացող կազմակերպություններում, ինչպես որինակ, Միացյալ Նահանգներում պողպատի կարտելը, վորը քայքայվեց մոտ ժամանակներս։ Անհրաժեշտ են արդյոք այլ ապացույցներ, յեթե ինքը Հուվերը, Միացյալ Նահանգների նախագահը (պրեզիդենտը), վորը մոտ ժամակներս պարծենում եր իր արդյունաբերության ծաղկող զարգացմամբ և յերաշխավորում եր Ամերիկայի կապիտալիստներին, վոր Ամերիկյան արդյունաբերությունը վոչ մի տատանումների չի յենթարկվի, յեթե ինքը Հուվերը մոտ ժամանակներս խոշոր պարտություն չկրի իր Ամերիկյան «ծաղկման» փիլիսոփայության մեջ

Ցեվրպայի և Ամերիկայի շատ թե քիչ նշանավոր տնտեսական կազմակերպություններն ու թերթերի խմբագրություններն արդեն աստիճանաբար գիտակցում են այդ։ Ցեվ յերբ համեմատում ենք այն, ինչ վոր կատարվում է մեզ մոտ և այն՝ ինչ տեսնում ենք նրանց մոտ, հարկ է բարեխղճորեն մտնենք նրանց

գրության մեջ և ասենք, որ նրանց մոտ խնդրանքը դրությունը ծանր է։ Նրանք ավելի ու ավելի լեն մտածում այն մասին, թե ինչ տեղի կունենա մոտակա գալիք տարիներում, յեթե խորհրդային սիստեման պետք է զարգանա նույնպիսի արագությամբ քայլերով, ինչպիսի քայլերով, որ նա զարգանում է այժմ, յերբ միաժամանակ կապիտալիստական աշխարհում տեղի չի ունենում զարգացման մեծապես անկում և ամենախորը ճգնաժամ։

Գերմանական լրագրերից մեկը սույն թվի հոկտեմբեր ամսում քննությանն առնելով մեր ժողովրդական տնտեսության զարգացման և կապիտալիստական յերկրների ժողովրդական տնտեսության զարգացման համեմատությունից ստացված արդյունքները, յեկել է այն յեզրակացությանը, որ կան, իրոք, յերկյուղ կրելու բոլոր հիմքերը, որ այս անգամ տեղի ունի ոչ թե սովորական կոնյունկտուրային ճգնաժամ, այլ որ կապիտալիստական աշխարհը գտնվում է յերկարատև լճացման-կանգնման սկզբնական շրջանում, որը կտևի 20 – 30 տարի։ Տեսնում եք, թե ինչպիսի հեռատեսություն է սկսել զարգանալ մեր թշնամիների ուղեղներում։ Ցավ կարծում եմ, որ մենք կարող ենք խորը համոզմունքով հայտարարելու կապիտալիստական սիստեմի այդ «տառապյալներին», որ Արևելքի բանվորները կդան ձեզ փրկելու։ Ցավ խորը համոզված եմ, որ Արևելքի բանվորներն ու աշխատավորությունը կհետևեն մեր որինակին՝ այնտեղ ևս կհաստատեն պրոլետարիատի դիկտատուրան ու համաշխարհային հոկտեմբերը, որի ուժերն անդիմադրելի կերպով աճում են, և կվերացնեն այդ ճգնաժամը շատ ավելի կարճ ժամանակամիջոցում, քան 20 – 30 տարին։

Բուրժուական այլ տնտեսագետներ հաստատում են, վոր չի կարելի հետևել Ջայլամի քաղաքականության, իբր անհրաժեշտ և ըմբռնել, վոր մեր առաջ վոչ թե կոնյունկտուրալին ճգնաժամ և, այլ սիստեմայի ճգնաժամ, այսինքն՝ կապիտալիստական սիստեմայի ճգնաժամ։ Այդ մասին մեզ պատմում են վոչ թե կոմունիստները, վորոնք աշխատում են Եվրոպայում և Ամերիկայում, այլ այդպես են ընորոշում իրենց դրությունը մեր դասակարգային թշնամիները։ Իսկ այստեղից հետևում է, վոր պատահական չէ այն հսկայական կամպանիան, վորը բարձրացել է մի շարք յերկրներում մեր առևտրի հանդեպ, սկզբում Ֆրանսիայում, ապա Բելգիայում, հետո Ռումինիայում և չպետք է զարմանանք, յեթե վաղը ելի մի կապիտալիստական յերկիր ցցի իրեն կոտոշները մեր առևտրական փոխհարաբերության դեմ։

Իհարկե, վերջին հանգամանքը վորոշ չափով դժվարացնում է մեր աշխատանքները, բայց պետք է ասել, վոր ինչպիսի միջոցների ել վոր դիմելու լինեն Խորհրդային առևտրի, արտաքսման արտահանվող խորհրդային արտադրանքի դեմ, այդ բոլորից նրանք առաջինը ոգուտ քաղել չեն կարող։ Թեկուզ ինչպես ել նրանք ուզում են աշխատեն, վորպեսզի կազմեն ուժեղ միասնական ճակատ, վորը նման լինի մեր արտաքին առևտրի մենաշնորհին, միևնույն է, նրանց այդ չի հաջողվի, վորովհետև նրանցից ավելի խելացիները այդ կամպանիային մասնակցել չեն կարող, քանի վոր ինչպես իրենք են հաստատում «շահի հոտ չի գալիս», քանի վոր նրանցից ամենախելոքների միակ ազգակն է «շահ և միայն շահ»։ Հետևապես, կրկնում եմ, չնայած նրանց

բոլոր ջանքերին, չնայած նրանց կողմից մեր խորհրդային առևտրի դեմ միացյալ ճակատ կազմելուն, դրժվար թե դրանից մի վորևե հետևանք ստացվի։

ՄԵՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՀԵՐԿԱԴՐՈՒՄ ԵՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՑԻՆ ԹՇՆԱՄՈՒՆ ԿԱՅՏՎԻ ԳԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ

Սակայն, ընկերներ, մենք չպետք է տարվենք մեր հաջողություններով և աչքներս փակենք այն դժվարությունների առաջ, վորոնք ստեղծվում ու ուղեկցում են մեր խորհրդային շինարարությանը։ Այդ դժվարությունները առաջանում են յերկու կողմից. դժվարություններ՝ վորոնք ծնունդ են առնում մեր յերկրի ներսում և դժվարություններ, վորոնք առաջանում են դրսից։ Մեր Խորհրդային սոցիալիստական շինարարության դեմ ուղղված կենդանի ուժերի ամենախոշոր կազմակերպությանը մենք հանդիպում ենք ճիշտ այն մոմենտում, յերբ մեր սոցիալիստական հարձակումը լայն ֆրոնտով ծավալվել է վոչ թե միայն քաղաքում, այլև գյուղում։

Հիշեցեք, ընկերներ, մեր այն քայլերը, վորով համատարած կոլեկտիվացման հիմունքների վրա, անցանք մեր հողի վրա գտնվող կապիտալիստական վերջին դասակարգի՝ կուլակության վերացմանը։ Հենց վոր մենք բռնեցինք առաջին տասնյակ կուլակների, ինչպես ասում են, կոկորդից, այնպիսի մի չտեսնված աղաղակ ու վոռնոց բարձրացավ, վորը լսելի յեր վոչ միայն մեր յերկրում, այլև մեր Միության սահմաններից դուրս։ Կուլակների վոռնոցը լսելի յեր վոչ թե միայն գյուղերում, շրջաններում, այլ նա լսելի յեր նաև մի քանի գործարաններում, ֆաբրիկաներում և,

դեռ ավելին, նա արձագանք գտավ մեր կոմկուսակցության վորոշ ողակներում։ Ճիշտ նույն բոպեին հասունացան մեր յերկրի սահմաններից դուրս գտնվող և ան կազմակերպությունները, վորոնք դասակարգային ընազդով զգացին գործի եությունը, թե դեպի ո՞ւր են տանում բալշևիկները Հոկտեմբերյան հեղափոխության զարգացման ավյալ ետապում։ Ցեվ ընավ պատահական չե, վոր մեր հարձակմանը կուլակության դեմ զուգորդեց արագ աճող ՁՆասարարության լայն ցանցը, վոչ թե միայն մեր արդյունաբերության մեջ, այլև գյուղատնտեսության մեջ, մեր սոցիալիստական շինարարության բոլոր ընագավառներում։

Մեր այդ հարձակմանը զուգորդեց մեր յերկրից դուրս գտնվող հակահեղափոխական ուժերի հուսահատ վոռնոցը, իսկ դրան ել զուգորդեց մեր կուսակցության առանձին ողակների վոռնոցը։ Մենք մոտեցել ենք վերջին ամրոցին, սկսել ենք գրավել վերջին վճռական ամրոցը, վորը կանգնած է մեր սոցիալիստական շինարարության ճանապարհի վրա, և մեր թշնամիներից յուրաքանչյուրը հասկացել է (իսկ դրա համար առանձին գրագիտության կարիք չկա), վոր յեթե ձեռքից ձաց թողնեն վճռական մոմենտը, ապա ուշ կլինի,

Այդ մոմենտին, ինչպես յես ասացի սկզբում, զուգորդեց նաև մեր հնգամյա պլանի յերկրորդ տարվա սոցիալիստական շինարարության մեջ կատարված վրճռական բեկումը։

Վերջին յերկու տարում ըստ հնգամյա պլանի՝ մեր կատարած աշխատանքները փայլուն կերպով ապացուցում են մեր ճիշտ լինելը։ Մեր յերկրի ներսում մենք վճռական պայքար ենք մղել մեր սոցիալիստա-

կան հարձակմանը դիմադրող կուլակության դեմ, վորոնք պրոլետարական դիկտատուրայի դեմ մղվող դասակարգային սուր պայքարում փորձում են իրենց հետևից տանել և միջակին։ Մենք հայտնաբերել ենք բուրժուական մասնագետների բարձունքների կողմից կատարված վնասարարության մի ամբողջ ընդարձակ ցանց, բուրժուազիայի և ինտերվենտների ագենտների, վորոնք խցկվել են մեր ժողովրդական տնտեսության դրեթե բոլոր ճյուղերի մեջ՝ տրանսպորտի, գյուղատնտեսության և մինչև իսկ մեր սոցիալիստական շինարարությունը հիմնավորող պլանային և տնտեսական կազմակերպությունների մեջ։ Դրանցից և վոչ մեկի ուժերը չբավարարեց վոչ միայն խորտակել մեզ, այլ թեկուզ կարողանալ դանդաղեցնել մեր սոցիալիստական շինարարությունը։ Ցավ ահա, վորպեսզի փորձեն իրենց վերջին վճռական և միակ միջոցը, վորի մասին ասում եր ընկ. Լենինը, մեր թշնամիները փորձեցին կապ հաստատել յերկրի ներսում և յերկրից դուրս գործող ուժերի մեջ։ Այստեղից և բղխում է այն բոլորը, վորի մասին մոտ որերս կարդում ելինք թերթերում։

Ցեղ նկատի ունեմ ամենախոշոր, ամենագազանային, ամենակազմակերպված հակահեղափոխությունը, վորի նմանը մենք չենք ունեցել վերջին ժամանակաշրջանում։ Այդ՝ այսպես կոչված «արդյունաբերական կուսակցության» աշխատանքն ու գործունեությունն է մեր յերկրում։ Այն՝ ինչ վոր հրապարակվում է թերթերում, և վորը դուք բոլորդ կարդացել եք, այդ «արդյունաբերական կուսակցության» գործունեությանը վերաբերող մատերիալների միայն մի մասն է։ Բացի «արդյունաբերական կուսակցության» այն խնդիրնե-

րից, որոնք թված են մեղադրական ակտում, և որոնք կհայտնաբերվեն դատական պրոցեսում, որը կսկսվի նոյեմբերի 25-ին, գոյություն ուներ մեր յերկրում բանվոր դասակարգի դիկտատուրայի դեմ պայքարի մի ամբողջ սիստեմ։ Սակայն, մենք գործի այդ մասի վրա դիտավորյալ կերպով կանգ չենք առնում, քանի որ ամենակարևորը և հիմնականը այն է, ինչ որ զետեղված է թերթերում հրապարակված մեղադրական ակտի մեջ։

Եյականը այն չէ, և այնքան էլ վտանգավոր չէ այն, որ «արդյունաբերական կուսակցությունը» մոտադրվել եր դիմելու տերրորիստական ակտերի, պայթուցիկների և ինասարարության այլ ձևերի մեր գործարաններում, ֆաբրիկաներում և այլն,—մեզ համար ամենից շատ հետաքրքրական և ինտերվենցիայի կազմակերպումը։ Ցես դա հաստատում եմ այն պատճառով, որ այժմ մեր թշնամիների համար էլ պարզ է, որ սոցիալիստական շինարարության այն շրջանում, որում մենք այժմ գտնվում ենք, կարելի չէ այսպես թե այնպես դանդաղեցնել մեր զարգացումը, միայն մեր դեմ պայքարող ներքին և արտաքին ուժերի համախմբելու և կազմակերպելու դեպքում։ Մեր յերկրի կարևորագույն հակահեղափոխությունը նույնպես գիտակցել է, որ այլ միջոցներ, այլ ձևեր չկան և չեն էլ կարող լինել։

Հաջորդ մատերյալներում մենք կարդացինք այդ իմաստը ունեցող չափազանց հետաքրքիր տվյալներ։ Բոլոր այդ Ռամզինները, Ռադչիները և այլն, իմիջի այլոց պետք է ասել, որ խելոք, կրթված և քաղաքականությունից շատ թե քիչ բան հասկացող մարդիկ են—նրանք բոլորը միաբերան խոսում են խորհրդային

սիստեմը ներսից պայթեցնելու անպորուքյան մասին։ Ցեվ հետևապես պատահական չէ նրանց կապը ոտարյերկրյա հակահեղափոխականների և իմպերիալիստների հետ։ Ռամզինները, Ռասդչինները և նրանց նմանները արտաստանման ունեցած իրենց բանակցությունների ժամանակ խոստանում էին գործադրել բոլոր միջոցները, վորպեսզի ոչնչեն նրանց, վորպեսզի խլեն թիկունքից,—բալշևիկներին կհալածենք, վորտեղ և ում հաջողվի և այլն,—սակայն այդ բոլորը միայն ուժանդակ միջոցներ են։ Վճռական հարվածին կարելի չէ սպասել միայն դրսից՝ կազմակերպված իմպերիալիզմից։

ԵՆՀՈՍՏ ՊԱՏԳԱՐ ՑԵՐԿՈՒ ՓՐՈՆՏԻ ՎՐԱ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՅԻԿՑԱՆ ՄԻԱՑՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ցեթե պարզ կերպով պատկերացնենք մեզ այս բոլոր ցանցը, յեթե ընորոշ կերպով պատկերացնենք մեզ այն բոլոր խոչընդոտները, վորոնք կանգնած են մեր զարգացման ճանապարհին, ապա յուրաքանչյուրի համար պարզ կլինի, թե իսկապես ինչպիսի հսկայական, թերևս վոչ բոլորի համար ըմբռնելի, պատնեշներ ենք մենք հաղթահարել։ Մեր յուրաքանչյուր քայլը, մեր յուրաքանչյուր գործողությունը հանդիպում է այնպիսի դիմադրության, վորոնց ամեն մի իմաստուն կսկսի ցնցվել, իսկ հաճախ ավելի վատ դրության մեջ կընկնի։ Ցեվ պետք է ուղղակի ասել, վոր ժամանակ առ ժամանակ ցնցվում են նաև մեր կուսակցության ներսում այս կամ այն ողակը, այս կամ այն խմբակը կամ բջիջը։ Այդ պատահական չէ և միանգամայն որինաչափելի է։

Ցեթե մեր հիմնավորումները ճիշտ են,—իսկ նրանք

անպայման հիշատ են,—որ մենք չենք կարող սոցիալիզմ կառուցել առանց նրան, որ մեր կուսակցության մեջ առանձին տատանումներ և այլն չլինեն,—շնորհիվ նրան, որ մեր շինարարությունը կատարվում է դասակարգային անողոք պայքարի պայմաններում,—ապա անխուսափելի որինաչափությամբ կկրկնվեն և տատանումները մեր կուսակցության ներսում։ Հենց որ շատ թե քիչ ուժեղ ողմենք մեր թշնամիներին, անմիջապես անտեսանելի թելերի միջոցով այդ անդրադառնում է մեր կուսակցության առանձին ողակների վրա։ Այդ յերևույթը կար և միշտ կլինի։

Հիշեցնեք, թե ինչպես ստեղծվում և տարածվում էին մեր սպպորզիցիաները անցյալում և դուք կհամոզվեք, որ ոպպոզիցիայի յուրաքանչյուր ստեղծմանը ու զարգացմանը զուգադիպում եր մեր քաղաքականության այս կամ այն փոփոխությունը յերկրի ներսում։ Մենք խոշոր դարձ կատարեցինք, լայն ծավալ տալով մեր տնտեսության, գործարանների ու ֆաբրիկաների ռեկոնստրուկցիային, մենք ծավալուն ֆրոնտով անցանք սոցիալիստական հարձակմանը քաղաքում, ապա և գյուղում, և պետք եր սպասել, որ վորևե տեղ, վորևե մեկի մոտ, մի տեղ կցնցվի այդ խիստ շրջադարձից։ Իզուր չեր, որ սկսեցին կակազել այնպիսի գործիչներ, ինչպիսին են Ռիկովը, Տոմսկին, Բուխարինը։ Բայց կակազում ու սայթաքում են անհամեմատ շատերը, քան մենք տեսնում ու նկատում ենք։ Յուրաքանչյուրս պետք և այդ պարզ կերպով հասկանանք։

Ռ.Ջ.-«ՁԱԽ» ՈՊՊՈԶԻՑԻՈՆԻՍՏՆԵՐԸ ԴԵՄ ԵՆ ԿԱՌՈՒՑԱԿՈՒԹՅԱՆԸ ԳԴԻՆ, ԴԵՄ ԵՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻՆ

Հետևապես պատահական չե և նոր ոպպոզիցիայի ալտպես ասած ծնունդը, որը կրում է Սիրցովի և Լոմի-

նաձելի աջ-«ձախ» բլոկ անունը։ Այդ էլ յերկնքից չի ընկել։ Վոմանք, թերևս, կմտածեն, թե Սիրցովը այնքան էլ կայուն մարդկանցից չէ, վոր նա կործանվեց, յերբ նրա ուսերի վրա դրին ՌՍՖԽՀ ժողկոմխորհի նախագահությունը։ Սակայն դա ճիշտ չէ։ Իր ժամանակին, քաղաքական կուլիսների շրջանում Սիրցովը մեզանից հետ չեր մնում,—յերևի այն պատճառով, վոր այն ժամանակ նրան թվում եր, թե ամեն ինչ ընթանում է միանգամայն որինավոր ճանապարհով, վոր այն հակալական նվաճումները, վորոնց մասին յես ձեզ ասացի, ձեռք են բերված չափազանց մեծ և բարդ դժվարությունների հաղթահարման միջոցով, վորոնց նա դիմադրել չկարողացավ.

Դուք գիտեք, վոր մեր շինարարությունը ընթանում է դեպի առաջ, դեպի վեր, շատ բարդ ուղիով, վորը ամբողջովին չի կարելի անցնել Ինտերնացիոնալ յերգելով։ Մեր ճանապարհ անցնում է դժվարին բարձունքների վրայով և հանդիպում է անթիվ խոչընդոտների, վորոնց հաղթահարելը այնքան էլ հեշտ չի, — և ահա հենց այդպիսի բարձունքների վրա պատահում է, վոր մեր կուսակցության վորևե ողակը սկսում է դողալ։ Ինձ թվում է, վոր հենց անդպիսի բարձրության վրա՝ մեր գյուղում կատարվող սոցիալիստական շինարարության ասպարեզում եր, վոր սայթաքեց Լոմինաձե Սիրցովի խմբակը, չնայած նրան, վոր այդ յերկուսն էլ ամենավճռական ձևով ժխտում են այդ։

Կրկին յես ձեզ փոքրիկ պատկերավորում։ Դուք բոլորդ գիտեք, թե ինչպիսի դժվարությամբ ենք կառուցում մի նոր ֆաբրիկա, նոր գործարան, նոր դիզանոց։ Ստալինգրադի տրակտորի գործարանը։ մենք

կառուցել ենք յեվրոպական-ամերիկական տեխնիկայի վերջին խոսքով, վորի հավասարը՝ բառիս բուն իմաստով, չկա ամբողջ աշխարհում։ Մենք այնքան ել հիմար չենք տեխնիկայում,—այդ ասպարիզում մենք դեռ կիսագրագետ ենք,—բայց մենք Ստալինգրադ հրավիրեցինք վողջ աշխարհի ամենահռչակավոր մասնագետներին,—և թեկուզ ինչքան ել այդ դժվար եր, բայց մենք կարողացանք գործարանը աշխատանքի դնել։ Այնուհետև՝ մենք կառուցում ենք Մագնեսագորսկի գիգանտը։ Մենք դրա համար ել բերել ենք ամենալավ, փորձված ամերիկական մասնագետներ,—սակայն Մագնիտաստրոյը նրանց համար ել նոր բան է, և մեզ հետ միասին նրանք գլուխ են տրաքացնում այդ գործի վրա։ Ինքներդ ել գիտեք, վոր դա այնքան ել հեշտ, հասարակ բան չէ.

ՑեսՁեր ուշադրությունը դարձրի մեր հսկայական շինարարության միայն այդ յերկու կետերի վրա, բայց դրանցից ել բավականին յերևում է, վոր.մի կողմից, կարծես թե հաջողություններ ունենք, իսկ մյուս կողմից տեսնում ենք, վոր ամեն ինչ այնպես հարթ, այնպես լավ չի գնում,—գործարանը մենք կառուցեցինք, սակայն նրան ամբողջովին մեկ անգամից չկարողացանք... Ցեվ ահա աշխատանքներից հոգնած ՌՍՖՍՀ-ի Ժողովրդական կոմիսարների Սովետի նախագահը գալիս է տուն և զբաղվում Պետքաղվարչությունից ստացված մատերիալների ընթերցանությամբ, վորտեղ կարդում է, թե ինչպես Ռամզիններն ու Ոսադչիները մտադրվել են ինտերվենցիա կատարելու, թե ինչպես այդ առթիվ նրա բանակցությունները արդեն ավարտված են, թե ինչպես մեր Միությանն Արևմտյան

ափում (յես խոսում եմ Ռումինիայի և Լեհաստանի մասին) ընդհանուր ճակատ է ստեղծված մեր դեմ, թե ինչպես ամեն ինչ կազմակերպված է, վորպեսզի ձեռք բցեն գլխավոր շտաբը, թե ինչպես է պատրաստված թշնամին,—և այդ բոլորին ավելացրած... նեբքին թերությունները։ Յերբ այդ բոլորը ի մի յես հավաքում, ապա իսկապես... ինչպես կարող է իրեն չկորցնել թույլ կամքի տեր մարդը։ (Ծիծաղ)։

Մենք տալիս ենք մեր ամբողջ ունեցվածքը, ամենուրեք զրկում ենք մեզ ամենաանհրաժեշտ իրերից, վորպեսզի, որինակի համար, Մագնիտագորսկը ինչպես հարկն է ավարտենք, իսկ յեթե դու շփոթվում ես, խուճապի յես մատնվում մեր հոյակապ շինարարության դժվարությունների, ապա կսխալվես անմիջապես։ Այդ դժվար չի։

Դա, ճիշտն ասած, այդպես էլ յեղել է։ Մարդը, նայելով իրերի այդ դրության վրա և այն էլ այդպիսի մթնոլորտում (իսկ դուք գիտեք, թե հաճախ մենք ինչպիսի շրջապատում ենք գտնվում, մանավանդ մեր խորհրդային որգաններում, յերբ մենք կուսակցական ըշիջներում, բանվորական ժողովներում կարողանում ենք գտնվել վեց ամիսը հազիվ մեկ անգամ և այն էլ մի վորևե չափազանց հանդիսավոր դեպքում, իսկ այստեղ Ռամզիններբը և Ռաադչիներբը պատրաստում են ամեն տեսակի նյութեր և զեկուցումներ, սրսկված ճնապարարության թույնով)—ճշմարիտ, պետք է ունենալ մինչև իսկ վոչ թե յերկաթից, այլ վոլֆրամից յերկաթից ավելի ամուր ջղեր, վորպեսզի դիմանաս այդ բոլորին և պահպանես անհրաժեշտ կայունություն։ Հաճախ թվում է, թե յեթե միայն մի քայլ անես շեմքի

վրայով և ահա ամեն ինչ պատրաստ է,—բայց բոլորի քայլն էլ այդքան մեծ չէ, մյուս վոտքը տեղ չի հասնում։ Ցեվ Սիրցովն էլ,—չնայած նա բարձրահասակ մարդ է,—սակայն չկարողացավ այդ քայլը անել և անցնել,—նա ցնցվեց և ընկավ։ (Ծիծաղ)։

Ինչ վերաբերում է Լոմինաձեյին, ապա մենք բոլորս գիտենք, վոր «մեր Բեսոն» կորիճ տղա է, նա վոչընչից չի վախենում, նա անլերկյուղ է և մի ժամանակ ջախջախում էր ամեն տեսակի ոպպոզիցիոներներին մեզանից լավ...։ Բայց հանկարծ,—համեցեք,—մեր յերկրում անմիջական սոցիալիզմի շրջանն անցնելու բոպեյին, յերբ մենք վոչ թե խոսքով, այլ գործով իրականացնում ենք ապաղասակարգային հասարակություն, և այստեղ է վոր նա ահագին գործ ունի անելու, հանկարծ՝ տեսեք թե ինչ արեց...

Ինչու այդպես յեղավ։ Դե իհարկե այն պատճառով, վոր չկարողացավ այդ մարդը մարսել իրեն շրջապատող այն բարդ դրությունը, այն կացությունը, վորի մեջ մենք այժմ գտնվում ենք։ Իսկ այս դրության մեջ կարծես թե գոյություն ունի չափազանց սարսափելի ներքին հակասություն. մեկ կողմից՝ հսկայական թափեր, խոշորագույն և ուժեղ ընթացք դեպի առաջ, իսկ մյուս կողմից, սպառնալիք, վորը թերևս կարող է մահացու թվալ։ Այդ յերկուսը պետք է կարողանալ շաղկապել, իսկ յեթե այդ չկարողացար անել, ապա անպայման կառաջանա այն հիվանդությունը, վորով և տառապում են Սիրցովը, Լոմինաձեն և նրանց համախոհները։ Ճիշտ է, նրանք հիվանդացան գծերով տարբեր. Սիրցովը անմիջապես սկսեց կաղալ աջ վոտից, իսկ Լոմինաձեն (ի միջի այլոց, նրան այդպես էր թվում

վոչ միայն այստեղ, նա և առաջներում և «մտածել» մեր սոցիալիստական շինարարության պրոբլեմի մասին),— յերևի այն պատճառով, որ նա ընդհանրապես մեր ղեկավար կազմի մեջ ամենից յերիտասարդն է,—նրան թվում էր, որ թեքությունն ավելի շատ դեպի ձախ պետք է վերցնել, յեթե ձախ թեքվես՝ ավելի լավ կլինի, շուտ կհաղթես, շուտ կկառուցես և շուտ դուրս կգաս բոլոր դժվարություններից։

Դուք, ընկերներ, բավականաչափ, իհարկե, ծանոթ եք ոպպոզիցիոն քաղաքականության նրբություններին, և կարիք չկա ապացուցելու, որ յուրաքանչյուրը, ով որ թե աջ, թե ձախ կթեքվի միևնույն է՝ ով ընդհանրապես մեր կուսակցության քաղաքականության նկատմամբ ոպպոզիցիոն ճանապարհը կբռնի, վերջին հաշվով կընկնի աջերի բանակը։ Դրանով յես ուզում եմ ասել, որ հասարակ հիմարություն չէ, որ առաջանում է այս կամ այն ընկերոջ ոպպոզիցիոն հիվանդությունը, բայց, իհարկե, և վոչ էլ շատ խելոքություն չէ (ծիծաղ)։

Սակայն, յեթե վերցնենք ոբյեկտիվորեն՝ ինչումն է վերջապես գործը։ Ոբյեկտիվորեն մեր յերկրի ներսում, մեր շինարարությունը ունի այնպիսի մի հող, որ յեթե այդ հողի վրա բարձրանաս առանց բալշևիկյան կրկնակոշիկների՝ անմիջապես կհիվանդանաս։ Այդպես յեղավ Լոմինաձեի, Սիրցովի հետ։ Առաջին հայացքից՝ նրանք հիվանդացան չափազանց համեստ հարցերում։ Որինակ Լոմինաձեն կուսակցության կենտկոմում զեկուցում էր. յեթե ձեզ ճշմարիտն ասեմ, յես այդ թերությամբ վաղուց եմ հիվանդ, վորն այլ կերպ չեմ կարող անվանել, յեթե վոչ ոպպոզիցիա հանդիսանալ

ԿԿ-ի հանդեպ.—կարծես թե առաջին հայացքից թերությունը այնքան էլ խոշոր չեր։ Ինչու չպիտի Լոմինաձեն ոպպոզիցիա չհանդիսանար, երբ մանավանդ նա հարավային տեմպերամենտ ունի։ Ինչու չերկչուղածությամբ վերաբերվել դեպի կուսակցության կենտկոմը և Քաղբյուրոն--մտածում եր Լոմինաձեն։ Կարծես թե թերությունն այնքան էլ խոշոր չե, սակայն այժմ Լոմինաձեն ինքն էլ հասկացավ, թե դեպի ձեր կարող է տանել նրան այդ դժգոհությունը։

Մեր ԿԿ-ի և Քաղբյուրոյի խնդիրները չեն կայանում նրանում, վոր «հաճելի» լինեն կուսակցության անդամների, բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության համար։ Նրա համար չեն այնտեղ նստած մարդիկ, վորպեսզի լոյալ ֆրազներ արտասանեն կուսակցության անդամների վերաբերյալ և այլն։ Այնտեղ բաղաքականություն է։ Այնտեղ ուրիշ վոչինչ չկա, չի կարող լինել և չպետք է լինի։ Դրա համար էլ մարդիկ ուղարկվում են այնտեղ։ Եթե դու հայտարարում ես, վոր դժգոհում ես այդ կազմակերպություններից, ապա մի մոռացիր, վոր դրանով դու ոպպոզիցիա ես հանդիսանում այն գլխավոր գծի դեմ, վորը մենք այդպես ուշադիր, այդպիսի համառությամբ ու վճռողականությամբ տանում ենք։ Ոպպոզիցիա հանդիսանալ այդ գծի դեմ՝ չափազանց վատ կատակ է։ Լոմինաձեն այդպիսի կատակներ նետել է և առաջներում Ստալինի և ուրիշների հետ միասին, սակայն մենք նրան բուժում եյինք, ուղղում, վորովհետև նա դեռ հեռու չեր տնցել, և մենք այդ վերաբերում եյինք նրա յերիտասարդական մեղքերին։ Յերիտասարդությունն այնպիսի մի բան է, վոր մարդ հաճախ է բռնվում զանազան

սխալներում,— լիբերատարությունը կարող է թույլ տալ վորոշ անզգուշություն նաև քաղաքականության մեջ։ Սակայն այս շրջանում նա արդեն սահմանը անցավ, և այն՝ ինչ վոր առաջ կարողանում էինք բուժել Լամինաձեյի մեջ՝ այժմ արդեն ավելի վատթարացավ։

ՑԱՐԿԱՐԵՍՏՆԻՆՆԵՐԻ ԲԼՈԿԸ ԵՎ ԱՆՁԵՐԻ ՊԼԱՏՖՈՐՄԱՑԻ ՎՐԱ

Սիրյոզի խմբակը, վորն իր խղիոլոգիան վերցրել է աջերի արսենալից և Լամինաձեյի ու Շացկինի խմբակը, վորը կարծես թե անվանում է «ձախերի» արսենալից, ինչպես հայտնի է ընդհանուր բլոկ են ստեղծել։ Արդյոք այն պատճառով կատարվեց այդ միացումը, վոր այդ յերկու խմբակներն էլ սակավաթիվ էին, թե այն պատճառով, վոր նրանց գլխավորում էին մեր կուսակցության մեջ վոչ այնքան էլ մեծ համակրանք վայելող անձնավորություններ. սակայն փաստն այն է, վոր թե մեկ թե մյուս խմբակների ծագման բնույթը միանգամայն անխուսափելիորեն թելադրեց նրանց մեկ ընդհանուր բլոկում կազմակերպվելու անհրաժեշտությունը մեր կուսակցության գլխավոր գծի և նրա ղեկավարության՝ Կենտկոմի դեմ հարձակվելու համար։

Պետք է ասել, վոր յերբ մենք ստացանք առաջին լուրերը այն մասին, թե ինչ է կատարվել Լամինաձե-Սիրյոզի հետ, մենք մինչև իսկ չելինք կասկածում, թե վորքան հեռու գնացած կլինեն նրանք։ Սակայն յերբ ստացանք հաջորդող ապացույցները և մենք համեմատեցինք դրանց թե մեկի և թե մյուսի նախկին գործունեության հետ, վերջապես յերբ նրանք իրենք ավելի մանրամասնորեն պատմեցին իրենց գործերի մասին, պարզվեց, վոր սկզբնական աղբյուրները հիմ-

նականում ճիշտ են լեղել։ Նրանք լերկուսն էլ՝ և Սիրցովը և Լոմինաձեն, իրոք վոր հիվանդացել են ամենաիսկական ոպպոզիցիոն բորոտով, այն էլ նրա ամենավատթար ձևով։ Թե մեկը և թե մյուսը կրակը ուղղեցին մեր քաղաքականության հիմնական խնդիրների դեմ։

Վերցնենք թեկուզ Լոմինաձեյի մեր կուսակցության ԿԿ և ԿՎՀ-ում ունեցած խոսակցության մեջ առաջադրած հիմնական դրվածքներից մեկը։ Այն մասին, թե ինչպես նա հասավ «այդպիսի կյանքին», իր ցուցմունքներում Լոմինաձեն ասում եր, վոր նա ամեն տեսակի դժվարություններ և վատթարություն եր նկատում մեր բանվոր դասակարգի կուլտուրական-նյութական բյուջեյում, նա մեզ պատմեց, թե ինչպես այդ նրան անհանգստացնում եր, և թե ինչպես նա «ինչ վոր կուսակցական դոկումենտում կարդացել է», վոր իբր թե կուսակցության ԿԿ-ն բռնել է «կապիտալշինարարության ֆրոնտի նեղացման» ուղին։ Այդ ժամանակ նա, Լոմինաձեն, հանգստացավ, տեսնելով ըստ իր ասելով, վոր կուսակցությունը հասկացել է իր անելիքները։ Նա՝ ուզեցել է դրա մասին հիշեցնել ԿԿ ին, բայց չի հասցրել, վորովհետև ԿԿ-ն ինքը հասկացել է այդ և անցել «կապիտալ շինարարության կրճատմանը» մեր յերկրում և այդ հանգամանքը նրան, Լոմինաձեյին բավարարել է։

Այսպես եր մտածում և այժմ էլ նույն կարծիքին է Լոմինաձեն։ Ցեսբեբեցի վերջին տվյալները, թե ինչպես է ծավալվում մեր կապիտալ շինարարությունը։ Ցեթե Համ. Կ(բ) ԿԿԿ-ն, իսկապես բռներ կապիտալ. շինարարության ֆրոնտի նեղացման ուղին, ապա յես

առաջինը կլինեն, վոր աղմուկ կբարձրացնեն այդպիսի ԿԿ-ի դեմ, վորովհետև բռնել-այդ ուղին՝ նշանակում է սոցիալիզմի մասին այլևս վոչ մի խոսք չի կարող լինել, դա կնշանակեր գնալ այն ռելսերով, վորը աշխատում եր անցկացնել, սակայն անհաջող, ընկ. Բուխարինը, քարոզելով այն փիլիսոփայությունը, թե առանց աղյուսի շինքը չի կարելի կառուցել և այլն։

Առաջին հայացքից, այդ կարծես թե անվիճելի ճշմարտություն է։ Իհարկե առանց աղյուսի շինք չես կառուցի, նույնպես վոչինչ չես կարող անել առանց մետաղի,—սակայն ընկ. Բուխարինը նկատի ուներ վոչ թե այդ, այլ այն, վոր հետագա սոցիալիստական շինարարության համար անհրաժեշտ է նախ հարյուր անգամ չափել, կշռել և ապա ըստ վերմակի պարզել վոտքերը։ Իբր թե կան միայն այսքան աղյուս, ապա կարիք չկա չափը անցնել։ Սակայն մենք մեր աշխատանքը տանում ենք, այսպես կոչված, լարված պլանների պայմաններում։ Մենք յուրաքանչյուր տնտեսական որդանին, յուրաքանչյուր տրեստին, կոմունալ բաժնին միանգամայն դիտավորյալ կերպով, դիտակցաբար ու ճիշտ տալիս ենք այնպիսի պլաններ, վորը նրանք թող հեվալով, լարելով իրենց ամբողջ ուժերը և ինչ գնով էլ ուզում է լինի,—պարտավոր են կատարել։ Իսկ եթե մենք սկսենք կառուցել այնպես, ինչպես մեզ խորհուրդ է տալիս ընկ. Բուխարինը, ապա թե աղյուսով, թե առանց աղյուսի՝ միևնույն է, վոչ մի սոցիալիզմ չենք կարող կառուցել։

Ճիշտ նույնն առաջարկում եր մեզ Լոմինաձեն։ Նա ինչ վոր տեղ «կարդացել» եր, թե մեզանում վերցրված է «կապիտալ շինարարության կրճատման» ուղ-

ղությունը, սակայն մենք ասում ենք, որ այդ մեզանում աճել է 84 տոկոսով։ Այդ անսյալ տարվա կապիտալ ներդրումների գումարն եւ Եթե յեթե հետագայում մեր միջոցները չբավարարեն, ապա անհրաժեշտ կլինի վերանայել մեր խորհրդային բոլոր մառանները, և դուրս հանել այնտեղից այն բոլորը, ինչ որ կգտնենք և որքան հնարավոր է շատ։

Դուք բոլորդ գիտեք, որ մեր կուսակցության XVI համագումարը իր որոշումներում միանգամայն որոշակի մատնանշել է, որ սոցիալիստական շինարարության մեջ ունեցած հաջողություններին զուգընթաց, մեզանում աճում է նաև բանվոր դասակարգի կուլտուրական-նյութական բարեկեցությունը։ Միանգամայն օբյեկտիվ տվյալներով այդ հանգամանքը լրիվ չափով ապացուցված է։ Աշխատավարձին վերաբերող թվերը մենք սառուցել ենք բոլոր գծերով, որոնցով որ կարելի յեր ստուգել, և այսպիսի մի գիծ, ինչպես օրինակ ՀԱՄԽ-ն է, որը կոչված է արթուն կերպով հսկելու աշխատավարձի դրությանը, նա նույնպես հաստատեց, որ մեզանում, ամբողջ Միության մեջ աշխատավարձը աճում է։ Այդ իհարկե չի նշանակում, որ որևե տեղ, հեռու աննշան վայրում չի կարող որևե թերություն լինել։ Սակայն յերբ մենք վերցնում ենք ընդհանուր առմամբ բանվոր դասակարգի դրությունը, ապա պետք է կույր լինել, որպեսզի չտեսնել,—թեկուզ առաջին հայացքից որքան ել պարադոքսալ թվա այդ,—որ աշխատավարձը մեզանում իսկապես աճում է (տեղերից՝ «ճիշտ է»)։

Ցեռ անկեղծությամբ պետք է ասեմ ձեզ, որ մեզանից յուրաքանչյուրը, որը լինում է գործարաննե-

բում ու Ֆաբրիկաներում, մանավանդ, վոչ բոլորովին դրական լեզվով ասած — դալմաղալոտ միջավայրում, դիտե թե ինչպես մենք հաճախ դժվարանում ենք։ Պատահում է, վոր այնտեղ խոսում ենք աշխատավարձի բարձրացման մասին, բանվորները մեզ հարցնում են. իսկ ատոական քանի՞ անդամ եք դուք մեզ միս տալիս.— իսկ, ինչպես հայտնի է, միսը ամավա բոլոր 30 որն էլ չի տրվում, հաճախ 20 և 15 անդամ,—և յերբ դրա հիման վրա վորևե մեկը աշխատում է ապացուցել, թե մեզանում աշխատավարձը ընկնում է, ապա դրանով նա ցուցաբերում է իր չափազանց պրիմիտիվ մոտեցումն այդ բարդ հարցին։

Ինչու՞ յես կանգ առա այդ հարցի վրա. Դե իհարկե այն պատճառով, վոր գիտեմ և ուղղակի պետք է ասել այդ մասին, վոր աշխատավարձի հարցում Լոմինաձե և Սիրցովի խմբակը ավելի շատ կողմնակիցներ ունի, քան թե պարզված են մեր կոոպերացիայի վերահսկիչ և այլ որգանների կողմից, և կասկածից դուրս է, վոր այդ հարցում սայթաքումները ավելի շատ են տեղի ունենում։

Եթե այս խնդիրների շարանը, վորոնց մասին յես խոսեցի, բավական է, ապա մեզանից յուրաքանչյուրը հեշտությամբ կարող է հասկանալ, թե ինչպիսի արտանալից է վերցրել այդ բոլորը ոպպոզիցիան։ Այստեղ կգտնեք և Տրոցկիզմից, և այն բոլորից, վորոնք մի ժամանակ առաջադրում էին Զինովևը և Կամենևը, որինակ, աշխատավարձի հարցում կգտնեք և՛ Բուխարինից և՛ Ռիկովից, այդ բոլորին ձեռնհաս է յեղել և՛ Տոմսկին։

Եթե քննադատում ես Լոմինաձեյի սխալները,

պետք է ասել, որ սկզբում շատերին թվում էր, թե դուցե Լոմինաձեի բերնից այդ բոլորը դուրս են թռել կիսաանկեղծ խոսակցության ժամանակ։ Մենք բոլորս Բեսո Լոմինաձեին ճանաչում էինք, որպես անկեղծ և բոլորի յերեսին ճշմարտությունը ասող մարդու։ Իրոք որ Լոմինաձեն աչքի յեր ընկնում այդ հատկություններով, բայց ինչպես այժմ պարզվեց, ընկերներ, որ նա այդ հատկություններով ավելի յի ան յել, քան թե պահանջվում է առողջ դատողությունից։

Հեղինակավոր ընկերներից մեկը Լոմինաձեի նկատմամբ ավելի հեռատես գտնվեց,—նա դեռ մի քանի տարի առաջ ասում էր, որ Լոմինաձեն այնքան անկեղծ մարդ է, որ ընդունակ է մինչև իսկ դուրս թռցնել բերնից կուսակցական գաղտնիքները,—և այդ ընկերը ճիշտ գտնվեց։ Լոմինաձեի անկեղծությունն իրոք որ չափից դուրս է՝ նրա համար ամեն ինչ բաց է։ Լենինյան ԿԿ-ի անդամ, իրազեկ լինելով ԿԿ-ի կյանքի և գործունեության բոլոր հարցերում (իսկ դուք գիտեք, որ մենք հաճախ ստիպված ենք լինում զբաղվել մեր թշնամիներից խիստ գաղտնի հարցերով, վորովհետև չնայած մենք ապրում ենք լեզալ և վոչ ընդհատակյա կյանքով, սակայն մենք ամեն կողմից շրջապատված ենք, և մենք ինքներս հաճախ ստիպված ենք լինում գայլի նման կատարել մեր գործը, և հետևապես հաճախ աշխատել գաղտնի), Բեսո Լոմինաձեն այստեղ ևս գտնվեց անկեղծ, նրա հոգին այնքան մատչելի յեր բոլորին, որ իրեն հետ ֆրակցիոն աշխատանք կատարող ամենամոտիկ ոգնականներից ու համախոհներից և վոչ մի գաղտնիք գոյություն չունեյին։ Նրա բաց բերանությունն անցնում էր ա-

մեն մի չափ ու սահման։ Այդ կարող է թվալ ձևական հարց և վոչ ըստ էության, սակայն դա մեր սոցիալիստական շինարարության հաջողությունների կարևորագույն պայմաններից մեկն է, և այդ պետք է ընդունել։

ՄԵՆՇԵՎԻԿԻՆ-ՅՐՈՑԿԻՈՑՏԿԻՆ ՁՐԳԵՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՈՒՍԿՑՈՒԹՅԱՆ, ՄԵՐ ՈՍՏԻԼԻՈՑՏԿԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄՈՑԵՑԻՆ

Մենք բոլորս գիտենք, թե ինչպիսի դեր է խաղում մեր աշխատանքներում այնպիսի մի ողակ, ինչպիսին է խորհրդային ապպարատը, խորհուրդները։ Բոլորի համար պարզ է, վոր այդ՝ մեր յերկրում բանվոր դասակարգի դիկտատուրայի որգանն է՝ այդ մեր կոմունիստական որգանն է, յեթե վոչ ամբողջությամբ, գոնե համենայն դեպս իրեն դեկավարության ապարատում։ Ամբողջ խորհրդային ապարատի համար, մեր այդ ողակի համար առաջին հերթին ամբողջությամբ պատասխանատու յե այն կոմունիստների համապատասխան խումբը, վորը գլխավորում ու դեկավարում է նրան։ Սակայն ինչպես է վորակում Լենինաձեն մեր այդ խորհրդային ապպարատը։ Նա ասում է, վոր ապպարատում դեպի բանվորների և գյուղացիների կարիքները տիրում է «աղալական—ֆեոդալական» վերաբերմունք։ Բայց գիտեք ինչ, պետք է կարողանալ ասել այդպիսի ստահոսություն, այն էլ բարձրաձայն, լուրջ կերպով, ինչպես հարկն է։ Բայց չե՞ վոր մեր պետական ապպարատներում այդպես են լինում միմյանց մեր ամենակատաղի թշնամիները։ Հապա կարդացեք Կերենսկուն, կարդացեք «Социалистический вест-

ՍՍՍՌ»-ը—չե՞ վոր նրանք իրերի դրությունը պատկերացնում են այնպես, վոր իբր թե մեր կուսակցությունը շահագործում է բանվոր դասակարգին, գյուղացիությանը և այլն։ Այդ բոլոր տեսակետները և Լոմինաձեն և Շացկին փոխ են առել աջերի արսենալից—գինանոցից։

Սիրցովն ամեն ինչ մութ գույներով է պատկերացնում։ Ամենուրեք նրա համար անթափանցելի խավար է։ Նրա աչքին ամեն ինչ գլխիվայր է յերևում և վոր վոչ մի հնարավորություն չկա ուղղելու այդ, վոր յեթե վոչ այսոր, ապա վաղը կառաջանա ամենասարսափելի ճգնաժամ և մենք կխեղդվենք նրա մեջ, յեթե իր ժամանակին չփրկեն մեզ Սիրցովը և Լոմինաձեն։ Ցեվ նա մտածում եր, վոր յերբ ամբողջը կցնցվի և մենք կը թռչենք այդ անդունդը, ապա նա Նուսինովի և ուրիշների հետ միասին կխղճա կուսակցությանը իր ցավալի վիճակում և դուրս կհանեն նրան այդ դժբաղդությունից։

Իսկ ի՞նչ եր մտածում այդ մասին մեր ղեկավարությունը—կուսակցության ԿԿ-ն և Քաղբյուրոն։ Սիրցովի կարծիքով Քաղբյուրոն մեր կոմունիստական աշխատանքի ամենորյա շտաբն է,—կոպիտ ասած, վոչինչ չի նկատում։ Նա պարփակվել է իր կեղևի մեջ և Կրեմլի պատերից դուրս, դեռ ավելին՝ իրեն զբաղեցրած շենքի պատերից դուրս վոչինչ չի տեսնում։ Սիրցովը փորձեց այդ մասին վոմանց հետ խոսել—սակայն վոչինչ դուրս չեկավ։ Նա ժողկոմխորհում նետվում եր մեկ այս, մեկ այն կողմը, գիշերները չի քնում, իսկ Քաղբյուրոն դրա վրդովման պատճառները չի հասկանում, վորովհետև, տեսնում եք, նա փակվել է իր

կեղևում և այնտեղ ողջից կոմունիստական քաղաքականությունն է ստեղծում։ Հետևապես այսոր կամ վաղը ամեն ինչ կկործանվի։ Եվ ահա, Սիրցովը սկսում է իր շուրջը հավաքել իր Սիբիրի համախոհներին, որպեսզի նրանց հետ միասին փորձի ազատելու դրությունը։

Փակված դեկավարության մասին, դուք գիտեք, որ խոսում եր դեռ Զինովյևը, նրա մասին խոսել է և Բուխարինը։ Մի խոսքով յուրաքանչյուր ոպպոզիցիոներին, հենց որ նա սկսում է ձևակերպել իր ոպպոզիցիան, հենց որ նա պարփակվում է իր ոպպոզիցիոն կեղևում, անմիջապես նրան ամեն ինչ թվում է հակառակ. որ դեկավարությունը փակվել է, որ դեկավարությունը ոչինչ չի տեսնում և չի լսում, և որ միայն ինքն, ոպպոզիցիոներն, գտնվելով իր ոպպոզիցիոն կեղևում, ամեն ինչ տեսնում և զգում է։

Երբքան յես կարողացա՝ ասացի ձեզ մեր նվաճումների մասին։ Բայց յես դիտավորյալ կերպով չխոսեցի այն հաջողությունների մասին, որոնք ընորոշում են մեր Միության մեջ կիրառվող աշխատանքի նոր ձևերը։ Յես համոզված եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը գիտե, թե ինչպես նոր շարժում է կատարվում մեզանում սոցիալիստական մրցության, հանդիպական արդիֆինպլանների և աշխատանքի այլ նոր ձևերի միջոցով։ Չէ՞ որ մենք այժմ կուսակցության մեջ ել ընդունում ենք այլ կերպ. այսոր բանվորին մեր կուսակցության մեջ ընդունելիս վոչ թե այնպես, ինչպես անցյալում։ Եթե առաջ բանվորին կուսակցության մեջ ընդունելիս մենք հետաքրքրվում էյինք նրա արտադրական ստաժով, նրա քաղաքական կա-

յունությունով և այլն, ապա այժմ այդ բոլորը արդեն բավական չեն։ Բացի այդ բոլորից մենք այժմ բանվորից հարցնում ենք. դտնվում ե, արդյոք, նա հարվածայիններ խմբակում կամ բրիգադայում, ինչ տեղ ե գրավում նա հանդիպական արդիֆինպլանի մշակման ժամանակ, ինչպիսի մասնակցություն ե նա ցուցաբերում նրա կատարման ասպարիզում, այն մասում, վորտեղ նա աշխատում ե և այլն և այլն, Ցեվ միայն այդ բոլոր հարցերին դրական պատասխան ստանալուց հետո մենք նրան ասում ենք. Այո, դու կարող ես և պետք ե գտնվես Կոմունիստական Կուսակցության շարքերում։

Գործարաններում և ֆաբրիկաներում մենք ունենք խոշոր նվաճումներ և հաջողություններ, բայց ինարկե, կան նաև բազմաթիվ դժվարություններ։ Սակայն, մեր աշխատանքի նոր ձևերի և մեթոդների միջով մենք այդ դժվարությունները վերջնականապես հաղթահարում ենք և կհաղթահարենք։ Ցեվ ամենից էականն այն ե, վոր այդ աշխատանքի նոր ձևերն ու մեթոդները կիրառում ենք վոչ թե միայն գործարաններում ու ֆաբրիկաներում, այլ ինչպես յես վերը շեշտեցի, նրանց կամաց-կամաց մտցնում ենք և գյուղի աշխատանքների մեջ։

Բայց ինչպես ե վերաբերվում աշխատանքի այդ նոր ձևերին նորագույն ոպպոզիցիան։ Վորպեսզի չըզբաղեցնեմ ձեր ուշադրությունը, յես թույլ կտամ ինձ կարդալ մի ցիտատ, վորը քաղված ե Սիրցովի զեկուցումից։ Ահա թե ինչ ե ասում նա.

«Մեզ մոտ այժմ այնպես ե, վոր յուրաքանչյուր ամենաճիշտ, ամենաանչեղի միտք իր ճա-

նապարհին պետք է ծեփվի վորոշ շերտերով, ինչպես կոշիկներին ցեխոտ ճանապարհին կպչում են ցեխի խոշոր կտորներ։ Այդ մենք տեսանք և սոցիալիստական մրցության և հարվածայնության գործում։ Բանվոր դասակարգի համարյա թե յուրաքանչյուր դրական ստեղծագործող գաղափարները, վորոշ ժամանակից հետո ինչվոր ավտոմատիզմի ձևով անպալման ստանում է այլանդակ կերպարանք, վորը և սառեցնում է բանվորական մասսաներին»։

Իսկ ահա, թե ինչ է գրում Տրոցկին նույն հարցի վերաբերյալ.

«Բանվորական դեմոկրատիայի փաստացի բացակայության պայմաններում, պրոլետարիատի կյանքով ու ինտերեսներով—առաջադրված սմեն մի կենսական անհրաժեշտ միջոց տարվում է խայտառակ, այլանդակ ձևով, վորը հաճախ, ավելի շատ վնաս է բերում քան ոգուտ»։

Ինչպես տեսնում եք զուգադիպությունը միանգամայն զարմանալի է պերճախոս է։

Մեր շինարարությունը մեր աշխատանքների պարծանքն է, վորով մենք հիանում ենք, և վորը այժմ գրավում է ամբողջ աշխարհի բանվորների մեծագույն ուշադրությունը,—մեր այդ նոր գիգանտները նորագույն տեխնիկայի կատարյալ թեևերն են։ Իսկ ինչպե՞ս են նրանց նայում նոր ոպպոզիցիայի ներկայացուցիչները և նույն Սիրցովը։

Յես արդեն թռուցիկ կերպով խոսեցի Ստալինգրադի գործարանի մասին,—այնտեղ կային անկանոնություններ, ինչպես յուրաքանչյուր նոր գործարա-

նում,—բայց միթե դա նվազեցնում է մեր նվաճումների ելույթյունը, միթե՞ դա նվազեցնում է մեր հսկայական հաջողություններին, որոնք ձեռք ենք բերել տրակտորների արտադրության գծով, որպեսզի յուրաքանչյուր մեր Ստալինգրադի գործարանը աշխատի լրիվ չափով՝ ազատվենք ոտարերկրյա կախումից։ Սիրցովն այդ չի տեսնում։ Ստալինգրադի գործարանը նա համեմատության մեջ է դնում պոտեմկինյան գյուղերի հետ։ Իբր թե, ինչպես այն ժամանակ, այժմ էլ փոշի յան փչում մեր աչքերին։ Ստալինգրադի կոմունիստները՝ ըստ Սիրցովի, ուզում են աչքի ընկնեն տրակտորի գործարանով և խաբեն մեր կուսակցության և բանվոր դասակարգի հասարակական կարծիքը։

Վերջապես նոր ոպպոզիցիայի ամենահետաքրքրական հատկանիշներից մեկն էլ այն է, որ նա իր գոյության առաջին իսկ որից ընդունեց խիստ կոնսպիրատիվ—գաղտնի բնույթ։ Այդ, բառիս բուն նշանակությամբ, ընդհատակյա կազմակերպություն է, որը ունի իր արտակարգ կերպով խիստ դիսցիպլինան, դիսցիպլինա—լսելու, մեկը մյուսին չդավաճանելու և ԿԿ-ին ճշմարտությունը չասելու։

ՑԵՐԿԵՐԵՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՓՐԿՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ - ԱՅ — «ՁԱԽ» ԲԼՈԿԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊՆ Է

Այստեղ յես չեմ ուզում կանգ առնել Լոմինաձեյի վերաբերմունքի վրա։ Նրա մասին ընդունված է մտածել, ինչպես յես վերը ասացի, որ նա սրտաբաց մարդ է, որ նա անկեղծ է ամենքի հետ։ Բայց թվում է, թե էլ ում հետ պետք է լինել անկեղծ, յեթե վոչ կուսակցության ԿԿ-ի հետ։ Սակայն Լոմինաձեն՝ այդ «հո-

ալ ապան» ԿԿ-ի հետ ամենից քիչ էր անկեղծ։ Ինդիվիդուալիզմը՝ նա իր բոլոր կասկածները, այն բոլոր մըտքերը, որոնք ծագում էին նրա գլխում՝ նա ամեն կերպ ծածկում էր ԿԿ-ից և սարսափելի էր դարձնում նրանց իր պարփակված ֆրակցիոն խմբակում։ Մարդիկ, որոնք հայտարարում էին, թե մեզ մոտ պարփակում և տիրում, մեր կուսակցության մեջ, մեր փոխհարաբերությունների մեջ կա կեղծիք և այլն, ընդունակ դտնվեցին ամենաակնառարոտ թեմաների՝ սոցիալիստական շինարարության մասին խոսելու միմիայն Կավրայսկիների, Նուսենովների և նրանց նըմանների հետ, իսկ ԿԿ-ի հետ խոսելու համար նրանց լեզուն չէր դառնում—շարժվում,

Այդ՝ նոր ոպպոզիցիայի բնորոշ հատկությունն է։ Համարել այդ «ներկերեսանություն», չափազանց մեղմ կլինի։ Ավելի ճիշտ կլինի վերակել այդ ոպպոզիցիային, որպես մի կազմակերպության, որը առաջին իսկ քայլերից, իսկապես, ընդունեց մեր կուսակցության դեմ աշխատանքի դավաճանական ձևեր և մեթոդներ։ (Ձայներ՝ «ճիշտ է») Եթե դու կուսակցության անդամ ես,—մանավանդ նրա ԿԿ-ի անդամ,—եթե դու ղեկավարում ես մի հակայական կազմակերպություն, ղեկավարում ես ամբողջ Անդրկովկասի կոմունիստներին, եթե դու իսկապես տեսար, որ կուսակցությունը սըխալվում է, եթե դու ավելի ճիշտ դեղատոմս ունես, քան թե համագումարների որոշումները և ԿԿ-ի դիրեկտիվները, ապա դու պետք է վերջին գզվելի սրիկան լինես, եթե այդ դեղատոմսը, որին այդքան անկեղծությամբ հավատում ես, ցույց չտաս ԿԿ-ին։ Այդ ինչ է։ Այդ միանգամայն չտեսնված սրբապղծություն

և կուսակցության լենինյան ավանդներին։ Կավրայսկուն և Նուսինովին կարելի է իր պլատվորման ցուցցտալ, Շացկինին՝ նույնպես կարելի է. գնալ Դագրի և այնտեղ մահացած Կոստրովի հոգեհանգստի ժամանակ տարածել իր այդ, հեղափոխությունը փրկող պլատֆորմն նույնպես կարելի է,—իսկ ահա ԿԿ և ԿՎՀ-ում այդ պլատֆորմալի մասին, վորին դու հավատում ես, պետք է լռել։

Յեթե ճշմարիտ է այն, վոր մեր առաջ այնպիսի հեռանկարներ են, վորից բանվոր դասակարգի նյութական բարեկեցությունը կլինի, յեթե դա ոբյեկտիվորեն ճիշտ կերպով ապացուցված է, ապա պետք է այդ մասին անմիջապես իրազեկ դարձնել մեր կուսակցության ԿԿ-ին։ Չե՞ վոր մեզանից յուրաքանչյուրս՝ յերբ վորևե թերություն և նկատում աշխատավարձի խնդրում կամ նախատեսնվում և ժամանակավոր բնույթ ունեցող տատանումներ դեպի իջեցումը, առաջին հերթին այդ մասին աղաղակում է ԿԿ-ն։ Այդ միանգամայն արդարացված է մեր ամբողջ աշխատանքների պատմությամբ. միայն այսպիսի խոշոր կոլեկտիվում ընդհանուր, սիրով և միասնական աշխատանքի շնորհիվ մենք կկարողանանք տանել այն պատասխանատու բեռը, վոր դրել է մեզ վրա պատմությունը։

Իսկ այստեղ կուսակցության ամենավորակյալ անդամներից՝ Սիրցովը—ժողկոմխորհի նախագահը, Բաղբյուրոյի թեկնածու,—վորի ձեռքին են գտնվում մեր պետական և կուսակցական ղեկավարման բոլոր դպանակները, վորից չի ծածկվում այն բոլորը, ինչ կատարվում է մեր կուսակցության ներսում, յերևում է, զբաղված է նրանով, վոր ամբողջ դիշերները պատկում

և, հեկեկում բարձի վրա, հառաչում՝ «տառապում եմ» կուսակցության և հեղափոխության վիճակի համար։ Նրան թվում է, մեր սոցիալիստական շինարարության գլխին կուտակվող ճգնաժամը կպայթի վոչ թե մի քանի ամսից, այլ մի քանի շաբթից հետո, և նա, վորպես ընքուշ որիորդ, կամ նստում է իր ժողկոմխորհի նախագահի աթոռին և լաց լինում հեղափոխության վիճակի մասին, կամ լավագույն դեպքում՝ հավաքում է Նուսխմովին, Կավրայսկուն և ուրիշներին ու նրանց հետ քելեխ է սարքում ու ծրագրում ուղիներ, վորով հնարավոր է դուրս գալ այդ դրությունից։ Սակայն կուսակցության ԿԿ-ից այդ խնդիրները ծածկվում են։ Ցեթե, ընկերներ, վաղը մեզանից յուրաքանչյուրս,— յես ուղղակի խոսում եմ միանգամայն անմիտ հրեշային յերևույթի մասին, - թեկուզ մեկ կամ յերկու որով վարակվելինք այդ հիվանդությամբ, ապա ինչ կստացվեր։ Կստացվեր մի զժանոց և մենք, իրոք վոր, կկործանելինք մեր սոցիալիստական շինարարությունը։

Բոլշևիկյան կուսակցությունը, ուրիշ կուսակցությունների համեմատությամբ նրանով է ուժեղ, վոր իր քաղաքականության մեջ, իր վարքագծում՝ նա պետք է միանգամայն անկեղծ լինի, մեզանում վոչ մի կոնսպիրացիա—գաղտնի աշխատանք չպետք է լինի։ Ցեթե դու սկսում ես մոլորվել, սխալվել, կուսակցությունը կանի այն բոլորը, վորպեսզի ոգնի քեզ ըմբռնել, վերամտածել, ուշքի գալ, վորպեսզի քեզ բժշկի, վորքան վոր հնարավոր է մինչև իսկ վորտեղ վոր այդ կարելի յե, արտասահմանյան կուրորտներում։ Իսկ յեթե այդ ել չի ոգնում, այդ ժամանակ մենք արդեն ասում ենք՝ կորիր ուր ուզում ես և մի պղծիր մեր շարքերը։

Սիրցովը, ըստ յերևույթին, այնքան եր հիվանդացել, վոր սկսել եր հանձնարարել կիսագրագետ մարդկանց,—կիսագրագետ կոմմունիստական, կուսակցական մտքով,—հավաքել իր համար նյութեր, թվեր և այլն։ Այդ տեղեկությունները հավաքելով և կազմելով կբաղված եյին նույն այն մասնագետները, վորոնց դատավարությունը մենք կլսենք նոյմբերի 25-ին։ Այդ բացարձակ փաստ է։ Սիրցովը, և նրա հետ մյուսները, ավելի շուտ պատրաստ են լսելու այդ մարդկանց ձայնին, քան թե մեր՝ իրենց կուսակցության ձայնին, իրենց ԿԿ-ի ձայնին։ Այդ մարդկանց հետ նրանք անկեղծ են, դրանց նրանք իրենց ճշմարտությունները կասեն, բայց անա կուսակցության կենտկոմի հետ, մինչև իսկ յերբ նրանց ոձիքից բռնեցին ու բերին իրենց արարքների ապացույցների հետ միասին, յերբ բոլորը առյերես արձանագրված եր, նրանք և այդ ժամանակ հրաժարվեցին խոսել։ Ներքին խմբակայնությունը թույլ չեր տալիս նրանց միանգամից բացել իրենց ոպպոզիցոն տեսակետները, և անհրաժեշտ յեղավ վտարել կուսակցությունից, յերբ արդեն ապացուցված եր նրանց ոպպոզիցիային պատկանելու հանգամանքը՝ Նուսինովին, Կավրայսկուն և ուրիշներին,—և միմիայն այդ բոլորից հետո Սիրցով-Լոմինաձեյի կողմնակիցները բոլորը պատմեցին մեզ մանրամասնորեն։

Սա ինչ վարքագիծ է։ Սրանից անցնելու ել տեղ չկա։ Իսկ յեթե այդ դրությունը արմատանա մեր կուսակցության այս կամ այն ողակում, ապա կարելի յե բոլորովին քայքայվել։ Սիրցովի և Լոմինաձեյի կողմից մենք տեսնում ենք միայն պարփակում, չխոսելու ցան-

կութիւն և դեռ ավելին, կղզիանալ իր մեջ, դրպարտել կուսակցութեանն ու նրա ղեկավարութիւնը։ Այդպիսի դրութեան դեպքում, ամեն մեկը հարց կտար իրեն. վերջապես ո՞ւմ հավատալ, եթե այդպիսի անկեղծ ու ճշմարտախոս մարդ, ինչպիսին է Լոմինաձեն, վոչ միշտ և վոչ ամեն տեղ ճշմարտութիւնը վոչ թե միայն ծածկել և, այլ մինչև իսկ դիտավորյալ կերպով, գիտակցաբար փոթել և ղեկավարութեան տակը և ուժեր է կազմակերպել Համ. Կ. (բ.) Կ. ԿԿ-ի դեմ և այդ բոլորը ծածկել։ Ցեռ այդ համարում եմ ամենախոշոր, ամենագլխավոր հանցագործութիւնը, վորը կատարել է Սիրցով-Լոմիրաձեյի խմբակը։

Ոպպոզիցիոն տենդով նրանք բավական չափով բռնված են յեղել դեռ կուսակցութեան XVI համագումարում։ Համագումարում Սիրցովը իր կասկածների մասին բացահայտ կերպով չխոսեց, դեռ ավելին,—նա հավատացնում եր, վոր նա Համ, Կ. (բ.) Կ. ԿԿ-ի գծին կողմնակից է։ Լոմինաձեն ամեն տեղ, և Մոսկվայում, բոլոր բանաձևերում ամեն կերպ թմբկահարում ու յերգվում եր, վոր ինքը կանգնած է Կուսակցութեան՝ Համ Կ. (բ.) Կ. ԿԿ-ի գծի վրա և այլն և այլն, սակայն իրականում անցավ ընդհատակյա աշխատանքի, վորտեղ անց եր կացնում իր ոպպոզիցիոն տեսակետները և կատարում եր իր յերկերեսանի քաղաքականութիւնը։

Ամենից յայտուն կերպով Լոմինաձեյի այդ յերկերեսանի, դավաճանական աշխատանքը արտահայտվեց Անդրերկոսի հայտնի դիմումի մեջ, վորը հրապարակվել եր ԿԿ-ի սեպտեմբերյան դիմումից հետո, իսկ Սիրցովի աշխատանքը՝ նրա բրոշուրում, նրա Պետական պլանային հանձնաժողովում տրված դեկուցման մեջ։

Ցես յերկար կանգ չեմ առնի Անդրերկոմի դիմումի վրա, դուք այդ բոլորը կարդացել եք, և կարծում եմ, վոր ամեն բոլորդ ել բավականաչափ հասկացել եք ու պարզել ձեզ համար։ Ինչպես ձեզ հայտնի յե, Բաքվա կազմակերպությունները բողոքեցին այդ դիմումի դեմ։ Այժմ ձեր աչքի առաջ կատարվող դեպքերի լուսաբանվելուց հետո, կասկածից դուրս ե, վոր կուսակցության գլխավոր գծի քողի տակ Լոմինաձեն անց ել կացնում Անդրկովկասում իր ֆրակցիոն տեսակետները և մասնավորապես նա անց ել կացնում, իրենց այդ դոկումենտի՝ Անդրյերկոմի դիմումի միջոցով։

Պետք և ձեզ ասել, ընկերներ, վոր այդ գործում անպարտ չեն և մեր աջերի լիդերները։ Հաճախ գործարաններում, հավանական ե դուք կլսեք այսպիսի հարցեր. լավ, յենթադրենք, Լոմինաձեն խենթացել ե, Սիրցովը հիվանդացել, ապա ինչ մեղք ունեն այստեղ Ռիկովը, Տոմսկին և ուրիշները։ Արդյոք ԿԿ-ն չի չափազանցում իր ցույց տված ներկուսակցական անհամբերությունը դեպի նրանց։ Սակայն գործարանները և ֆաբրիկաները Սիրցով-Լոմինաձեյի նոր ոպպոզիցիայի առնչությամբ մեկը մյուսի հետևից միանգամայն վորոշակի մերկացնում են աջերի այդ լիդերներին։ Ցեվ այդ պատահական չե։ Ցես աշխատեցի ապացուցել, վոր այն բոլոր նյութերը, այն բոլոր հիմնավորումները, վորոնց առաջադրում են Սիրցովը և Լոմինաձեն՝ գլխավորապես վերցրված են աջերի արսենալից։ Սակայն չպետք և մոռանանք, վոր կուսակցության XVI համագումարում աջերի վերաբերմամբ մենք հանեցինք միանգամայն վճռական վորոշում, վոր աջերի տեսակետները մեր կուսակցության պատկանելիության հետ ան-

համատեղելի չեն։ Մենք պարտավորեցրինք, պարզ կերպով պարտավորեցրինք, Ռիկովին, Տոմսկուն և Բուխարինին վճռական պայքար մղել ոպպորտունիզմի դեմ ընդհանրապես և մանավանդ աջերի, որպես ամենագլխավոր վտանգի մեր կուսակցության ներսում։ Սակայն անցել են ամիսներ, իսկ նրանք, կարծես բերանները ջուր են լցրել, չեն խոսում, ելույթներ քիչ են ունենում, կամ ուղղակի լռում են այն կենսատրոփ թեմաների հանդեպ, որով ապրում է մեր ամբողջ կուսակցությունը, որով զբաղվել է կուսակցության XVI համագումարը։ Նրանք լուռ են։ Եթե նրանք իսկապես, վճռական կերպով և անվերադարձ խզել են իրենց կապերը ոպպոզիցիայի հետ և ղղջացել են իրենց սխալները, այն ժամանակ պետք է վո՛չ թե միայն բացարձակ և անջատ ձևով այդ մասին հայտարարել, այլ և կուսակցության հետ միասին պայքար մղել թեքումների դեմ։ Եվ նրանք լուռ են այն ժամանակ, երբ կուսակցությունը պաշտպանում է գլխավոր դիծը հարձակումներից, թե աջից և թե ձախից, այն ժամանակ երբ բոլոր ընտարարները մեկը մյուսի հետևից փաստաթղթերով վկայում են, թե ինչպես իրենք կարողացել են շեղել ու դրավել մեր այս կամ այն պլանային որգանում աշխատող մեր կուսակցության ներկայացուցիչներին։

Պետք է հասկանալ, ընկերներ, (այժմ դա լրիվ կերպով ապացուցված է) մեր թշնամիները, դավադիրները ու հակահեղափոխականները յեղան այնպիսի մարդիկ, ինչպես Ռադեկին, որը ԽՍՀՄ պետպլանի նախագահի տեղակալն էր և կենտրոնական Գործադիր Կոմիտեի անդամ, մի մարդ, որը մուտք և ունեցել

մեր բոլոր պետական ապպարատները, վորը մասնակցել է հնգամյա պլանի կազմելուն։ Չե՞ վոր այդ բոլոր Ոսադչիները, Ռամզինները միաբերան խոստովանում են, վոր նրանք հույս ունեին, թե՝ աշխերը կուսակցության XVI համագումարում կհաղթեն։ Վնասարարները չեն կասկածում, վոր աշխերը կհաղթեն և իրը, այդ պատճառով,—հայտարարում են նրանք,—մենք ամեն կերպ աշխատում էինք ոգնել աշխերին և մինչև իսկ պատրաստ ենք յեղել՝ յեթե համագումարում աշխերի ուժերը իրենց դավաճանեն,—ֆիզիկապես վոչնչացնել կոմունիստական կուսակցության առաջնորդին ու նրանց մոտիկ ոգնականներին, միայն թե կազմակերպչորեն ամրացնեն աշխերի հաղթանակը։

Յեթե Ռիկովը, Տոմսկին և ուրիշները խոսքերով ընդունում են և իրը թե համակարծիք են մեր կուսակցության վորոշումների հետ, իսկ գործնականում այդ վոչնչով չեն ապացուցում, ապա մենք ակամայից կասկածում ենք, թե վորն և այստեղ դերազանցում՝ կեղծավորությունը, թե յերկյերեսանիությունը։ Ըստ ոպպոզիցիայի վաստակավոր առաջնորդների այդպիսի վարքագիծը առաջացնում ու ամրացնում է նույնպիսի վարքագից Լոմինաձեյի, Սիրցովի և ավելի փոքր մասշտաբի մարդկանց մեջ։

Կուսակցության մեջ առաջանում է բոլորովին չտեսնված մի յերևույթ, վորպիսին չի յեղել և վոչ մի ոպպոզիցիայի ժամանակ, մի յերևույթ, վորը առանձնապես սպառնալի յե տվյալ ժամանակաշրջանում։ Այդ յերկյերեսանիությունն է, այդ կուսակցության գլխավոր գծի ձևականորեն ընդունելը, իսկ գործնականում՝ նրա, կուսակցության դեմ, ընդհատակյա աշխատանք տանելն է։

Դուք գիտեք, թե ինչումն է արտահայտվել այդ մեղ մոտ, այստեղ։ Պետք է ասեմ ձեզ, վոր, իհարկե, այնտեղ՝ ամբողջ միությունում, Լոմինաձեյի և Սիրցովի ոպպոզիցիան առանձին ցնցում չի առաջացրել։ Սակայն այստեղ, Անդրկովկասում, վորը Լոմինաձեյի գործունեության ասպարեզն է, վորտեղ նա գլխավորում էր Անդրկովկասյան կազմակերպությանը, դուք գիտեք, թե ինչ կատարվեց. դուք գիտեք, թե ինչ դրության մեջ է այժմ Անդրկովկասյան կազմակերպությունը, վորը նրան հավատում էր,—հավատում էր ավելի քան հարկավոր էր, գնում էր նրա հետևից, հավատացած լինելով, վոր նա անխախտ կերպով իրականացնում է կուսակցության գլխավոր գիծը, ոգնում էր նրան վորքան կարող էր։

Ցավ ինչ ստացվեց Լոմինաձեյի այդ յերկյերեսանխության հետևանքով։ Ստացվեց այն, վոր մասնավորապես Վրաստանի կազմակերպության մեջ մինչև վերջին ժամանակները Լոմինաձեյի մասին վոչ մի կասկած չի յեղել։ Անդրկովկասյան ղեկավարությունը, պետք է ուղղակի ասել, այն մոմենտից, յերբ պարզվեց Լոմինաձեյի յերկյերեսանությունը, դավաճանությունը, այնպես իրեն կորցրեց, վոր մինչև վերջին որերս էլ, իսկապես, մենք մնացել ենք առանց Անդրկովկասյան կուսակցական գլխավորության։ Այդ դրությունը անխուսափելիորեն անդրադարձավ առաջին հերթին Վրաստանի կազմակերպության վրա, ապա բավական չափով և Հայաստանի,—և միայն Բաքվի կազմակերպությունը՝ ի պատիվ նրան պետք է ասել, վոր իր ժամանակին ազդանշան տվեց հռչակավոր դիմումի վտանգի մասին։ Բաքվի կազմակերպության բան-

վորական հոտառությունը զգալ ավեց նրան, վոր Անդրյերկոմի դիմումի մեջ ամեն ինչ կարգին չե, սակայն այդ դեռ բավական չեր, մասնավորապես Վրաստանի կազմակերպության համար և ընդհանրապես անդրկովկասյան ղեկավարության համար։ Մինչև վերջին որերս Անդրկովկասյան ղեկավարության մեջ դեռ ևս նկատվում եր այնպիսի ցրվածություն, այնպիսի անվճռողականություն ու թափթփվածություն, վոր մենք միայն այսոր, նոր վերջացող Անդրյերկոմի և Ա. ՅԵՎ Հ-ի միացյալ պլենումում կազմակերպեցինք Անդրկովկասի համար նոր կուսակցական ղեկավարություն։ Իսկ մինչ այդ անցել ե բավականին ժամանակ, բավականին որեր, վորոնք վճռական դեր են խաղում մեր շինարարության մեջ։

Մենք այստեղ, Անդրկովկասի կյանքի հատուկ պայմաններում այնպես ենք դաստիարակված, վոր փոխադարձ վստահությունը, մտերմությունը, բարեկամությունն ու հայրենակից լինելը չափազանց խոշոր նշանակություն ունի։ Ցեվ դա յե, վոր բարենպաստ պայմաններ ե շնորհել Լոմինաձեյին և բավական չափով հեշտացրել նրա աշխատանքը։ Շատերը իրենք այդ չզգալով գործիք են դառել նրա ձեռքում։ Ճանաչելով նրան համարյա թե յերեխայությունից, դեռ փոքր հասակից, գիտենալով նրա դրական հատկությունները, հավատալով նրան, ընդունելով վորպես հարյուր տոկոսանի բայլշևիկ, ընկերներից վոմանք հեշտացրել են նրան քարշ տալու իր այն հիմնավորումները, վորոնք բնավ չեն համապատասխանել մեր կուսակցության գլխավոր գծին, ի միջի այլոց կռիվը բայլշևիկների հետ Անդրֆեդերացիայի հարցի շուրջը։ Ցեվ

միայն այստեղ, տեղում, կարողացա մանրամասն կերպով ծանոթանալ դրան։ Լոմինաձեն ամեն ինչ կազմակերպել էր խորամանկությամբ և ճարպիկորեն։ Վորպեսզի իրեն համար ասպարեզ ունենա Բագվում, վորպեսզի իր կողմը դրավի Ադրբեջանի և Բագվի կոմիտեները,—նա հասկանում էր, վոր դեմ առ դեմ գնալ չի կարելի,—նա սկսեց մեղադրել Բագվեցիներին, վոր իբր թե նրանք խանգարում են Անդրֆեդերացիայի ամրանալուն, վոր իբր թե նրանք գործադրում են ամեն մի միջոց, վորպեսզի անջատվեն Անդրկովկասյան դեկավարությունից, Անդրֆեդերացիայի մեջ մտնող մյուս հանրապետություններից և ուզում են առանձնանալ իրենց Ազգերոնյան թերակղզում։ Դրանք կարելի չէ վորսալ և այն էլ հեշտ։ Յեվ կասկածից դուրս է, վոր շատերը յենթարկվեցին դրան ու գաղափարական կռվին, վորը Լոմինաձեն տանում էր Բագվի Կոմիտեի հետ (այդ նույնպես ապացուցված է). մասնակցում էին շատերը, հատկապես Անդրֆեդերացիան պաշտպանելու և փրկելու դրոշի տակ։ Յեթե այդ կռիվը յերկար շարունակվեր, անկասկած Անդրֆեդերացիային սպառնացող վտանգը կմեծանար, սակայն մյուս ծայրից և վոչ թե Բագվի կողմից։ Լոմինաձեն Բագվում կնստացներ այնպիսի մարդկանց, վորոնք յեթե նրա լրիվ համախոհներից էլ չեյին լինի, համենայն դեպս անշեղ կկատարեին այն, ինչ վոր Լոմինաձեն նրանց կառաջարկեր։

Ահա թե ինչպիսի մեթոդներով ու միջոցներով եյին պայքարում Լոմինաձեն և Անդրֆեդերացիան կապող մյուս ողակները։

Յես պետք է ասեմ, և կարծես թե Անդրյերկոմի ԱՅԵԿՎՀ-ի այսորվա միացյալ պլենումում վոչ վոքի

կողմից չի առարկվել, որ մինչև վերջին ժամանակները իսկ շատերը լրիվ չափով դեռ ևս չեն հասկացել, մանրամասնորեն, հիմնովին, այն բոլորը, ինչ որ կատարվում է։ Շատերը դեռ չեն հասկանում, որ պայքարը տեղի յե ունենում մեր կուսակցության քաղաքականության վճռական սկզբունքային խնդիրների շուրջը, և որ Լոմինաձեն խրվել է այդ գործում, որպես անհուսալի ոպպոզիցիոներ, որ նա հասել է ֆրակցիոն դրության այնպիսի աստիճանին, յերբ բացի բոլոր այլ միջոցներից, նրա դեմ պետք է ձեռք առնել ամենավճռական կազմակերպչական միջոցները։

Այդ է Անդրյերկոմի Պլենումի ընդհանուր կարծիքը, և յես կարծում եմ, որ Լոմինաձեյի խմբակի նկատմամբ ամենածայրահեղ կազմակերպչական միջոցների առաջ կանգ չեն առնի և այսորվա ունկընդիրները։ Ինձ թվում է, որ միայն այդ միջոցը նրան կստիպի սթափվելու, փոխելու իր մտադրությունները և վերանայելու իր տեսակետները։

Գործը չափազանց բարդացել է, և մենք, Անդրկովկասում, այդ մասին լրիվ հաշիվ չենք տալիս մեզ։ Մենք դեռևս մեր աչքի առաջ տեսնում ենք այդ «Սքանչելի Բեռ Լոմինաձեյին»—հիանալի մարդուն, լավ ընկերոջը և չենք նկատում այն, որ նրա բոլոր այդ դրական հատկությունների հետևը թաքնված են այնպիսի սկզբունքներ, որոնցով նա փորձում ել, համենայն դեպս, տատանել մեր կուսակցության քաղաքականության հիմնական գաղափարները։ Վորպեսզի այժմ ոգնած լինենք Լոմինաձեյին, յեթե գործը դրան հասավ,—ապա պետք է մի լավ հարվածել, այնպես որ նա ուշքի գա, վեր թռնի և սթափվի, յեթե նա ընդունակ է սթափվելու։

Այսոր Անդրյերկոմի և ԱՅԵԿՎՀ-ի միացյալ պլենումում չեմ հիշում ով, շատ ճիշտ կերպով ասաց, վոր «Լոմինաձեյի դեմ կատարվելիք սկզբունքային պայքարի խորությանն յուրացմանն գործում մեզ խանգարում են մեր մտերմական, ընկերական և այլ խմբակային զգացմունքները, վորոնք մեզ հաճախ հասցնում են քաղաքական անզգայնության»։ Դա միանգամայն ճիշտ եր։ Իսկ քաղաքականության մեջ ճիշտ դրա հակառակը պիտի լինի և մանավանդ տվյալ չափազանց պատասխանատու և բարդ շրջանում։

Այդ տեսակետից անդրկովկասյան ղեկավարությունը և մասնավորապես Վրաստանի ղեկավարությունը, անկասկած ցուցաբերեցին միանգամայն բացառիկ շփոթություն։ Ցերը վոր նրանց հասավ Համ. Կ(բ)Կկ-ի միանգամայն անփոփոխելի տվյալները, փոխանակ դուրս գալու բայշևիկյան հրապարակը և կոչ անելու, թե ինչ, ինչու և ինչպես պատահեց, փոխանակ կառավարման ղեկը անմիջապես իր ձեռքը վերցնելու և Լոմինաձեյի թողած հետքերի ու ճնացորդների դեմ վճռական մաքրում սկսելու, փոխանակ ամենքին և ամեն ինչ իրենց տեղերում կանգնեցնելու և պահանջելու բոլորից կատարել կուսակցության գլխավոր գիծը, վոչ թե յերկյուղից, այլ բարեխղճորեն,—ղեկավարությունը շփոթվեց, իրեն կորցրեց և միմիայն թևերն ե թափահարում։

Բանը նրանում չե, վոր իր ժամանակին տանք դրության քաղաքական գնահատականը, այլ նրանում, վոր անմիջապես իր ժամանակին ծավալել աշխատանքը։ Այդ մեզ մոտ չի յեղել և այդ՝ մեր ամենահիմնական թերությունն ե։

Պայքարելով յերկու ճակատում, լենինյան ԿԿ ղեկավարության տակ, դեպի հնգամյակի իրագործումը, բայլշեվիկյան ջինարարությունը յեվ սոցիալիզմի կառուցումը ԽՍՀՄ-ում։

Ինչպիսի գործնական խնդիրներ են կանգնած այժմ Անդրկովկասյան կազմակերպությունների առաջ։ Անդրկովկասյան հանրապետությունները մի շարք պարտքեր ունեն իրենց առաջադրած պլանների կատարման տեսակետից։ Անդրկովկասի հանրապետությունները պարտք ունեն տալու Համկ(բ)Կ կենտկոմին, իսկ մենք այստեղ յերկու շարաթ է ինչ զբաղված ենք մեկս մյուսին համոզելով, այս ժողովից մյուսը գնալով, չվել մի հանրապետությունից մյուսը, մշակել և վերամշակել այս բոլոր բանաձևերը և այլն։ Պետք է ասել, վոր մեր աշխատանքները Անդրկովկասում ընթանում են վոչ այն արագությամբ, վոչ այն թափով, վորը այժմ անհրաժեշտ է։ Այդ բոլորը բացատրվում է ճիշտ այն փոխհարաբերությամբ, վորը դեռևս տիրում է այստեղ։

Ցեսս պետք է մատնանշեմ, վոր ամեն տեսակի ոպպոզիցիոն թեքումների դեմ պայքարելու հետ միասին, մենք պետք է վորչափ հնարավոր է շուտ վերացնենք այն հին սովորությունները, վորոնք դեռ գոյություն ունեն,—այդ վերաբերում է մտերմության և այլն։ Ցեսս կողմնակից եմ մտերմությանը, բայց առաջին հերթին՝ քաղաքականությանը։ Ցերը մտերմություն են անում յերկու տարբեր բևեռներում մարդիկ, և յերբ այդ մտերմության պատճառով նրանք չեն ցանկանում մեկը մյուսի առաջ ուղղակի կերպով դնելու առանձին քաղաքական հարցեր, ապա այդ՝ վնաս և կուսակցության

համար և այդ չարիքին մենք ավելի հաճախ կհանդիպենք, յեթե իր ժամանակին չկարողանանք վերացնել այդ մոնեմության դաղափարը։

Թող մեզ չթվա, վոր բոլոր խնդիրները պարզ են և այլն։ Մենք պետք է այն նյութերը, վորը մեր տրամադրության տակ բավականաչափ ունենք, ամենամարբաղնին կերպով քննության առնենք մինչև ամենա ստորին բջիջներում, վորպեսզի կուսակցության յուրաքանչյուր անդամ միանգամայն ընորոշ կերպով հասկանա իրերի դրությունը։ Յերբ նա այդ հասկացավ, այն ժամանակ հեշտ կլինի նրա համար արժատախիլ անել Լոմինաձեշչինան, վորը դեռ այստեղ անպայման կա և չի էլ կարող չլինել։ Այն ժամանակ նա միանգամայն հաստատ կերպով և գիտակցաբար կսկսի շտկել այն դրությունը, վորի մեջ մենք գտնվեցինք, դա կավելացնի մեր էներգիան և թափը, վորպեսզի ուժեղ կերպով կպչենք մեր առաջ դրված ընթացիկ գործնական խնդիրների լուծման աշխատանքներին։

Անդրկովկասի համար կարևորագույն խնդիրը՝ դա Համկ(բ)Կկ առաջադրած խնդիրն և, Անդրֆեդերացիայի ամրապնդման մասին։ Այդ դիրեկտիվը ԿԿ-ի կողմից տրված է յեղել մեկ տարի սրանից առաջ։ Այդ ուղղությամբ վորոշ բան արդեն արված է, բայց յես պետք է ասեմ, վոր դեռևս այդ արված է ավելի շատ ձևականորեն, քան թե գործնական։ Աշխատանքներ դեռ շատ կան։ ԿԿ-ի վորոշումը միանգամայն պարզ ձևակերպում է Անդրֆեդերացիայի առաջ դրված խնդիրները։

«Անդրֆեդերացիայի որգանները, վորոնք առաջին շրջանում գլխավորապես քաղաքական

դեր եյին խաղում, վորոնք ապահովել են անդրկովկասյան ազգային հանրապետությունների հաջող զարգացումը, ուժեղացրել են պրոլետարիատի դիկտատուրան և ամրացրել ազգամիջյան համերաշխությունը, այժմյան շրջանում իրենց ուժերը պետք է կենտրոնացնեն ազգային հանրապետությունների տնտեսական -սոցիալիստական շինարարության վրա, նրանց ինդուստրիալիզացիայի, գյուղատնտեսության տեխնիկական և սոցիալիստական վերակառուցման ասպարեզներում»։

Մեր ընթացիկ խնդիրներն են Անդրկովկասում նավթը և բամբակը։ Մանավանդ բամբակի նկատմամբ Անդրկովկասյան կազմակերպությունը մեծ պարտք ունի Համկ(բ)կկդ-ին։

Իմ զեկուցման սկզբում ես խոսեցի մեր սոցիալիստական հիմունքներով գյուղը վերակառուցելու մասին, նույն թվում և Անդրկովկասյան, իհարկե, վոչ այն չափով, ինչպես արվում է այդ հիմնական հացահատիկային շրջաններում։ Այդ տեսակետից ազգային շրջանները դրված են յերկրորդ հերթին, սակայն և այն, ինչ վոր նրանք պետք է իրականացնեն այդ յերկրորդ հերթին, թույլ տվեք ձեզ վկայելու, վոր դրա համար դեռ անհրաժեշտ պայմանները բացակայում են։ Անդրկովկասյան գյուղը միայն կոլեկտիվացմանը չէ, վոր սպասում է։ Թույլ տվեք ձեզ ուղղակի ասելու, վոր մի շարք շրջաններում՝ Գյանջայի, Շամխորի գյուղերը սպասում են խորհրդային իշխանության կազմակերպմանը։ Ցեվ այդ խորհրդային իշխանության 13 տարվա գոյությունից հետո։ Այնտեղ կարոտով սպասում են խորհրդային իշխանությանը, իսկ արդեն այդպիսի

պայմաններում խոսք անգամ չի կարող լինել կոլեկտիվացման իրական հաջողությունների մասին, կոլխոզային շինարարության մասին։ Այդ պետք է վորքան հնարավոր է շուտ վերացնել, իսկ դրա համար, առաջին հերթին պետք է վերականգնել անդրկովկասյան կազմակերպության բոլոր ողակներում մեր կուսակցության գլխավոր գիծը, վորը Լենինաձելի և նրա արբանյակների ջանքերով խախտված է, վարկաբեկված է և վորոշ տեղերում մինչև իսկ պղծված է։

Ահա թե ինչումն է գործը։

Ընկերներ, սկսած բջիջների ժողովներից, մինչև վերջին միացյալ պլենումը, անդրկովկասյան կուսակցական կազմակերպությունները բազմիցս անգամ վճռական խոստումներ են տվել՝ պայքարել կուսակցության գլխավոր գծի համար։ Բայց այդ պայքարը պետք է կայանա վոչ թե միայն նրանում, վոր համապատասխան հեռագիր ուղարկել կամ խոստումներ տալ, այլ պետք է իրագործել բոլոր մեր տնտեսական խնդիրները։ Ցեռ ասայի և նոբիյ եմ կրկնում՝ անդրկովասյան կազմակերպությունը աշխատում է խորհրդային յերկրի հարավային դռների մոտ։ Իմպերիալիստները այդ դռները բաղխում են ամենավճռական կերպով, և վորքան արագ կատարենք Համկ(բ)կկկ-ի կողմից Անդրֆեդերացիայի առաջ դրված խնդիրները, այնքան արագ ու հմտորեն կուժեղացնենք մեր Միության հզորությունը և պաշտպանունակությունը։ Թերակատարված արդյունաբերության յուրաքանչյուր տոկոսը, բամբակի, թելի, ծխախոտի, նավթի յուրաքանչյուր ցակասորդը՝ վոչ այլ ինչ է, բայց յեթե մեր պաշտպանվելու ընդունակության, մեր հզորության թուլացում։

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր մեր պայքարի հաջողությունը այն չափով կհեշտանա, վորչափով արագ կվերացնենք մեր մեջի խառաշփոթությունները, կարենք մեր ուշադրությունը սոցիալիստական շինարարության կարևորագույն հատվածների վրա և անխոնջ կերպով լայն կծավալենք մեր աշխատանքները և մամուլում և ժողովներում և բջիջներում։

Ամեն տեսակի յերկյերեսանի աշխատանքների եյությունը պետք է բացատրել յուրաքանչյուր բանվորին, կուսակցության յուրաքանչյուր անդամին, կոլխոզնիկին, չքավորին, բատրակին։ Յուրաքանչյուրը պետք է հասկանա, վոր բոլոր տեսակի դժվարությունները հաղթահարելու համար մենք ունենք միայն մի ուղի՝ այդ մեր կուսակցության գլխավոր գծի ուղին է և վոչ թե մի այլը։

Վորպեսզի այս կռվի վախճանը ապահովենք մեր ոգտին, անհրաժեշտ է վորպեսզի հնգամյակի մնացած յերկու տարվա ընթացքում աշխատենք ուղղակի առանց հանգստանալու։

Ընկերներ, հիշեցեք, վոր հնգամակի իրականացումը՝ դա կոմունիզմի դաղափարի հաղթանակն է վոչ թե միայն մեր յերկրի ներսում, այլ նաև նրա սահմաններից դուրս։ Հնգամյակով կհաղթենք վոչ թե միայն մեր ներքին թշնամիների մնացորդներին, այլ կհաղթենք ամբողջ կապիտալիստական աշխարհին։

Դեպի աշխատանք, դեպի հնգամյակի իրականացումը, դեպի համաշխարհային հեղափոխություն։

(Բուռն ծափահարություններ՝ վորը փոխվում է ովացիայի)։

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0046842

(134.)

ԳԻՆԸ 15 ԿՈՊ. (2 մանեթ)

A I 9512

С. КИРОВ

Под знаменем генеральной линии партии к новым победам социализма

Госиздат ССР Армении
Эривань